

# ԳԱՐԱԿՆ

## ԸՄՍԵԳԻՐ

Ազգային Լուսաւորութեան և Դաստիարակութեան:

---

Ը. տարի - ամսատեսք Դ. Եպրիլ - 1866.

---

## ՀԱՄՍԹՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԸՆԿԵ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:

## ԲԵՐԵԿԵՐԳԻԹՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հասարակաց Ըստուածաղաշտութիւն:

Ըստուածաղաշտութիւնը սկսվումէր տէրունական աղօթքով, և միաբան աղօթքի էին, յիշումէին հեռաւոր քրիստոնէիցը և ննջեցեալներուն, կարդումէին հին կտակարանից միքանի զլուխներ, և քիչ ժամանակից յետոյ՝ առաքելական թղթերը (Առդ. գ. 16), և ապա եպիսկոպոսը կամ էրէցը մեկնումէր նրանց կարդացածը, ինչպէս որ Հոգին տալիս էր ուսուցանել (ա. Տիմ. ե. 17): Առանձին աղօթքներ լինում էին, ինչպէս Տերառուղանոս գրումէ, նոր Արքածներու, գիւղահարներու, նորընծայ քրիստոնէից, թագաւորներու ըարեկեցութեան և խաղաղութեան համար, Ճանապարհորդներու և նեղացածներու համար: Արդումէին Ըստուծոյն սաղմուսներ և ուրիշ փառաբանական երգեր (Գործ. բ. 47: Եփ. ե. 19:

Առջ. գ, 16): «Պլինիոսի ասելով երկու կողմից էլ երգումէին հերթով (Պլին. գիրք ժ. դԼ. 97), ինչպէս այժմէ: Սոկրատէս (Գիրք վ. դԼ. 8) հաւասարի է անում, թէ երգեցողաթեան այս կարգը սահմանեց Դգնատիոս Սատուածազգեաց առաջին դարումը, որ Անտիոքի երրորդ եպիսկոպոսն էր:

Սատուածազտութեան տեղերը:

Հրեց և հեթանոսներու երկեւղեց աստուածպաշտութիւնը և խորհուրդները կատարումէին յատկապէս վերնաշտան մէջ՝ ուր Հողին Սուրբ իջաւ, մատուռներում և առանձին նշանակւած աներում: Պաւղոս Առաքեալը օրոշելու համար այս տեղերը հասարակ աներից, անւանումէ Երկեղեցի (ա. Առին. ժա. 18, 22): Դգնատիոս գրումէ Փիլապեղփայրոց վերա, թէ „Երկեղեցին ունի մի սեղան, մի եպիսկոպոս քահանայից և սարկաւագաց հետ“: և Մագնեղեցուց թղթումը կոչումէ Աստուածոյ Տաճար: Եւ երբ որ երրորդ գարումը զօրացաւ քրիստոնէութիւնը և մի քանիսը Հոռոմայեցւոց կայսերացմէն քրեատոննէական կրօնին աղասութիւնն չնորհեցին, այն ժամանակ սկսեցին շինել եկեղեցիք հրապարակներում: «Եորա շինութեան ձեր տեսնումները եկեղեցեաց շինութեանց մէջ, որքեն՝ այս բաց մուտն, որ է բակն կամ պարիսպն; ըստ Տերառողիանոսի (Տերառ. յաղագոս ողջախոհութեան դԼ. դ.), այս տեղէին ապաշխարում ծոնր յանցանքի մէջ ընկածները. բ) դաւիթ, ուր կանգնումէին ներելի մեղքերի տղաշխարողները, դ) տաճար, Երուսաղէմայ Երկեղեցին բաժանվումէր երկու մասը, առաջինումը կանգնումէին աղասարպիք, իսկ երկորդումը՝ կանայք. դ) բ և մ կամ ամբ ի ոն բարձրացած տաճարի մէջ գէսլի արևելեան կողմի պատը մի քանի աստիճաններով, որի վերա լինում էր քաղաքութիւն. ե) Աեղան, որ է վէմքարն բեմի վերա, մէջ տեղը՝ ունելով աջ ու ձախ Խաչկալ երկու գոներով. սեղանը օծումէին սուրբ իւղով ըստ Գիտնեսիոսի (Գիրք բ.



րիստոսի մատնութեան օր, և ուրբեաթը՝ որպէս խաչելութեան, և կոչւեցան ունակացութեան և պահոց օրեր: Մէջ գիշերին էլ էին աղօթքը սկսում Դաւիթ մարդարէի խօսքով (Աաղ. Ճժ. 62), և ինչպէս Պաւղոսն արաւ բանափի մէջ Շիզայի հետ ծեծւելուց յետոյ (Պործ. Ժզ. 25): Գիշերային աղօթքը յիշատակում էն Աղեմէս Աղեքանդրացի, Տերտուղիանոս և Արոգինէս (Բան. յամն 51 Աղեմ. Աղեքս. Յաճախ. ե.):

### Ժամակոչութիւն:

Հաւատացեալներուն կանչում էին եկեղեցին սարկաւագներու և ընթերցողներու ձեռքով, որ հաւատացեալներու տըները գնալով հրաւիրում էին նրանց ներկայ գտնուելու հասարակց աղօթքի ժամանակ, իսկ սարկաւագուհիք կանչում էին այլի և մարդարէր կանանցը, որք անհաւատներու հետ պահած էին (Խննովկ. եկ. պատ. հատ. ա. եր. 62):

### Պահք

Առաջին եկեղեցին սահմանեց պահքը մարմնական ժութեկալութեան համար: Առաքեալքը երբ որ պիտի եկեղեցական պաշտօնեայ ձեռնադրէին՝ առաջ պահում էին: Չորեքշաբաթի օրը սահմանեցին պահէլ Վրիստոսի մատնութեան յիշատակ, և ուրբաթը՝ խաչելութեան, նոյնպէս քառասուն օր զատկից առաջ, և հինգ օր տէրունական տօներուց առաջ: Եյս օրերումն արդելած է ուտել միս, ձէթ, իւղ, ձուկն և ուրիշ ուտրասեղէն և գինի խմելը, կամ ուրիշ խմիչք:

Երկրորդ դարումը ամենայն եկեղեցիք միապէս չէին պահում, ուստի և չուներ սահման (Երին. բանք առ Եւսեբ. Գիրք ե. Գլ. 24): Երեմանեան եկեղեցիքը մէծ պասը մէկ շաբաթ էին պահում. իսկ արեւելեան եկեղեցեաց մէծ մասը քառասուն օր:

Երրորդ դարում եղաւ ընդհանրական. Տերտուղիանոս զբումէ, թէ „այն օրերումը պատարագը հանդիսով չէր կա-



վումէին նրանց, որոց վերսա շինումէին մասուներ, և Վ-  
ռաքելոց կանոնադրութիւնով ամենայն շաբաթ կատարումէ-  
ին նոցա յիշատակը (Աման 5): Խոկ թէ պատվումէին մար-  
տիրոսներուն վկայումէ երկրորդ դարը, որ հեթանոսները թոյլ  
չաւին քրիստոնէից Պողիկարապոսի մարմինը՝ որ չպատւին:

Քրիստոնէից թաղումն:

Քրիստոսի եկեղեցին հաստատւած լինելով հաւատա-  
ցեալ Նրէիցմէն Երուսաղէմումը, նոյնպէս և ուրիշ գաւառ-  
ներում, նոքա ստիպումէին հեթանոսներուն մովսիսական օ-  
րէնքը ընդունելու: Որպէս Նրէայք նոյնպէս և հեթանոս-  
ները ունին թաղման ծէսը, և գժւար էր վերացնելու նոցա  
սովորութիւնները, մանաւանդ որ քրիստոնէական օրէնքին ոչինչ  
անպատճութիւն չէր բերել, ուստի հրէական և հեթանոսա-  
կան սովորութիւններից ջոկելու սահմանեցին կատարել հան-  
դիսաւոր կարգ աղօթքով և պատարագով, մեռեներուն լւա-  
նումէին ջրով, պատանումէին սպիտակ կտաւով, զոր Ու-  
կերերանը կոչումէ նոր հանգերձ անապականու-  
թեան, երեսը ուղղումէին դէպի արևելք, թաղումէին  
մարտիրոսներու գերեզմանների մօտ, և փոխանակ փող փշելու  
հեթանոսներու պէս՝ երգումէին հոգեոր երգեր: Մեռել-  
ներու հանգստան պաշտօնը, որ այժմ կոչվումէ ամբիծք,  
սկավումէր արեի մէր մանելուց յեայ, շարունակվումէր ողջ  
գիշերը երգերով, ընթերցւածներով և աղօթքներով, վերջա-  
նումէր պատարագով և հասարակաց սեղանով, զոր քէլէ ին  
ենք կոչում: Վիւս օրը կանայք զնումէին ննջեցելոց գերեզ-  
մանը, որ աավումէ այդ: Նրէական եօթն օր սրգի փոխա-  
նակ սահմանեցաւ եօթն պատարագ ամբիծքներով և նոյնպէս  
երեսուն օր արամութեան և հեթանոսներու որպիսի էին Ե-  
ղիպտացիք եօթանասուն օրի փոխանակ՝ քառասուն օր պա-  
տարագ. և տարելից, որ և այս օրերը կատարումէին հացկե-  
րութով, իսկ տարելըցի հացը կոչվումէ սուրբ սեղան:



անւան համար : “Առքա չէին վախում՝ բռնաւորմելուց , այլ  
աներկիւղ գնումէին մարտիրոսներու հետ նոցա նահատակու-  
թեան տեղը , և նրանցմէն թափած արիւնը ժողովումէին  
սպոնդով և կտաւով : Մեծ հոգս ունէին նահատակներու  
մարմինը թաղելու և նրանց այրւած մարմինների մոխիրը  
հաւաքելու համար :

Հասարակաց սեղան :

Հասարակաց սեղանը կատարվումէր երեկոյեանը նոյն տա-  
ճարի մէջ ինչ օր որ պատարագ էր լինում , սիրոյ և հաւատա-  
ցեալներու միութեան նշան ՚ի մի զլուխն Քրիստոս : Այս  
սեղանը սովորաբար պատրաստվումէր պատարագի մնացած  
ներքից : Սովորութիւն էր նոյնպէս և ազապ բերելը , նա և  
ննջեցեալներու յիշելու համար , որ միասին վայելումէին տա-  
ճարումը : Խայց երբ որ բազմացան քրիստոնեայք մտան հետ-  
նուհետը անկարգութիւնք , ուստի վերացնելու համար եկեղեցոյ  
սուրբ հարքը չորրորդ դարի ժողովքներումը Ամեկիու երկ-  
րորդ , Անախոքի և Լաւոգիկեայի նզովքով արգելեցին տա-  
ճարումը հացի ուտելը : Թաւուքի սովորութիւնը վերացաւ ,  
բայց հետքը հոգեսորապէս տեսնվումէ Հայոց և Յունաց  
եկեղեցերումը , որ պատարագիչը մի քանի նշխարներ թիսելով  
նրանցմէն վեր է առնում մէկը պատարագի համար , և մնա-  
ցածը աւալատելուց յետոյ բաժնումնն ժողովրդեանը , որ կոչ-  
վումէ մտա :

“Աւերքը , զոր առաջին քրիստոնեայք բերումէին , լինում  
է և այժմ , զի ժողովրդեան որ և իցէ հոգեսոր պէտքերի կա-  
տարելու համար մատուցանելով պատարագ՝ առաջի երեկոյին  
ուղարկումէն եկեղեցոյ սենեակը եկեղեցականաց համար սե-  
ղան , որ կոչվումէ պաշտօնացաց հաց , և միւս օր պատարագը  
աւարտելուց յետոյ տանումնին իրանց տուն հօգեսորակոննե-  
րուն և աշխարհականներուն հացի , ուղարկումէն և հիւանդ-  
ներու ու բանտարկածներու համար էլ , նոյնպէս և Զատկի

մեծ տօնին, ըրբ նաւակասիքներում մօրթումենք գառներ ու ոչխարներ, և եփած բաժնումենք աղքատներուն, որ առաջինքը տառմէին տգապ, իսկ մենք մատադ:

Ենապատական կեանք:

Երբորդ դարումը ծաղկեցան Եղիպտոսում անտպատականներ, և հիմնադիլն է Պաւղոս Ուեբայեցին, որ առանձնացած մէկ այրի մէջ՝ Հանապազ աղօթքի հետ էր, և կերակրվումէր արմաւով (խուրմայ): «Սպասէս և Ենաօն բաժնելով իւր հարստութիւնը աղքատներուն՝ առանձնացաւ անապատ տեղի: Սոքա երկուան էլ եղան ճգնաւորական կեանքի երեելի օրինակներ ։ Միայնակեցութիւնը աւելի ծաղկւեցաւ չորրորդ դարումը: Ենաօն գրեց նոցա համար կանոններ, սահմաննելով կերակուրներ և զգեստներ:

Վոաքելական եկեղեցոյ բարեկարգութիւնը:

Վոաքելական եկեղեցոյ բարեկարգութիւնը հաւատի մասին հիմնւած էր Հետևեալ կանոնների վրա, որ հաւատացեալները իսկութեամբ սպահանել էին վարդապետութեան օրինակները, զօր Վոաքեալք սովորեցնումէին (Հռոմ. գ. 17: բ. Տիմ. ա. 13, 14), որպէս զի նոքա հեռանան շահավաճառութիւնից և հակառակութիւնից, որոցմէն կծագին նախանձ, կռիւ, հայհոյութիւն և կարծիքներ (ա. Տիմ. գ. 3, 4, 5), հերետիկոսներուն երկու անգամ յանդիմաննելուց յետոյ ոչ հաղորդութիւն ունենան և ոչ ողջոյն տան (Տիմ. գ. 10: բ. Յով. ա. 10, 11). ինչպէս մանուկներ փափագին անխարդախ կաթին, որ աճին փրկութեան համար (ա. Պետր. բ. 2): Բարքուվարքի մէջ պահանջմումէր որ հզօրները բառնան տկարներու տկարութիւնը, և միմեանց համբերեն սիրով (Հռոմ. ժե. 1: Եփ. դ.) կերակրավ չզայթակղեցնել թոյելրուն (Հռոմ. ժդ. 18), հաւատացեալները թողնեն անհաւատներու դատարանները, և

և կեղեցոյ պատիկը գտատաւոր նստեցնեն (ա. Արքն. գ. 1-7), անկարգներուն և անշնազանպներուն հեռացնեն հաղորդութիւնից և սեղանից, որ ամաչեն և ուղղվին (բ. Թեհ. գ. 6, 14, 15: ա. Արքն. ե. 11): Յայտնի մեղաւորներուն և անսապաշխարողներուն պատօժեն բոլորովին մերժելով եկեղեցոյ հազօրդութիւնից (ա. Արքն. ե. 2): Եւետարանի ճշմարտութեան ծոռողներուն նպովին (Գաղ. ա. 7, 8, 9):

Եւաքելական սահմանադրութիւնք:

Տացի դրւած կանոններից նոր Ատակարանումը եկեղեցոյ բարեկարգութեան համար, կան և ուրիշ կանոններ առ ւանդած Եւաքելոցմէն, զորս դրեց Պատրոսի աշակերտ Արքեմէսը, որոց մէջ գլխաւորներն սրանք են:

ա) Եղօթել և երկրագանել դէպի ի արեւելք:

բ) Եմեն կիրակի տօն ու պաշտօն լինի և պատարագ մատուցանել:

դ) Պատարագի հացը նցին օրը թիւել, և տաք տաք տանել սեղանք, բաժակումը ջուր չխառնել (Թաղթ.):

դ) Եկեղեցումը կարգական մարգարէական և առաքելական գրքերը, և նրանց վերջումը Եւետարան ինչպէս պատաւական կնիք առնենայն գրքերի, և ժողովուրդը ոտին կանգնած լսէ:

ե) Չորեքշաբաթ օրը պահել Քրիստոսի մատուցեան յիշատակ:

դ) Արբաթ օրը պահել Քրիստոսի խաչելութեան յիշատակ:

է) Կարաթ օրերումը կապարել մարտիրոսներու յիշատակը և պատարագ մատուցանել:

լ) Օքննութեան և յայտնութեան տօնիը կատարել Յունիքարի վեցին:

թ) Քրիստոսի չարչապահի օրերից սուած պահել քառասուն օր:

ժ) Չատութեան տօնը յիսուն օր կատարել Քրիստոսի յարութեան տօնը:

(Ժա) Օքատկից մինչեւ համբարձումը քաղուասունօր ու  
տել և յենոյ պահել:  
 (ՃԲ) Երեխային ուժնօրական մկրտել:  
 (ՃԳ) Եկեղեցոյ պաշտամունքներումը ասել ամեն օր Դաւ  
թի սաղմոսը և օրհնութիւնքը:  
 (ՃԴ) Տէրունական տօներուց առաջ մի շաբաթուպմէնել  
(Թաղ.):

Առողբ Յօնոքրոս Տեսան եղբայրն Երուսաղէմի առաջին  
եպիսկոպոսը կարգեց քառասուն բնժերցւածներ մեծ պատումը,  
և առողբ Ափրեղ Երուսաղէմի հայրապետը աւելացրեց նոցա  
վերայ տան և ինն ընթերցւածներ, որ լինումէ յիսուն և  
ինն չին և նոր կատարաններից (Յայսմաւողբ Մարտ 18:  
Մայիս 7):

Խաչքիւն և Խաչվելաց:

Թմէպէտ սուրբ Խաչի զիւտը Հռոմայեցոց և առմանք  
Հայոց մատենադրիներուց առում ին թէ զտու Վաստանիած  
նոս մեծի կայսեր մայր Հեղինէ թագուհին, բայց մեր ձառն  
ընտիրների և Յայսմաւողբումը Փետրվարի 26 այբապէսէ  
զրած, թէ Աղոփէոնի կայսեր կինը Պատրոնիկէ անոն, որ  
հաւատացած էր Քրիստոսին, զնաց ուխտ Եթունաղէմ և լու-  
կու աղջկով և երկու տղով, ու կանչելով իւր մօտ Տեսան  
եղբայր Յակոբոսին՝ հարցրեց խաչափայտի համար, (Եղորով  
հետեւնա չէր իմանաւմ տեղը) ակաց նեղը Ծել Հռերէից որք  
ցոյց առնեն տեղը և դտան Քրիստոսի թաղւած այրի մեջ  
երեք խաչ. և չէին իմանում թէ ո՞ն է Քրիստոսինը, այդ  
ժամանակ մեռաւ թաղուհու աղջեկը, և նորա մեծ եղբայրը  
համոզեց մօրը, և ո նոյնաղէս և Յակոբոս Տեսան եղբայրը  
որ փորձենայն երեք խաչելը մեռածի վերա, և փորձելով ցայտ-  
նըւեցաւ Անձաց Փայտը որի վերա մեռելը գնելով յարութիւն  
առաւ, և թագուհին մատանալով Տեսան եղբօրմէն Խաչա-  
փայտի մասը յետպնաց Հռոմ, և պահւեցաւ մինչեւ Հռոմիւ-

սիմեի ժամանակը, որ կայսեր և կայսերուհու ցեղեցն էր։ Եւ երբ որ Հռիփսիմի ծնողքը տւին նրան սուրբ Պայիանէի վանքը, այն Խաչն էլ զցեցին նորա Ալինքը՝ (Ապրի պրոց հատ. գ. եր. 7)։ Խակ Արդան պատմիքը այսափ է յիշատակում թէ, „Աղողեայ կայսեր կինն և որդիքն հաւատացին ՚ե՛ Քրիստոս, և գտին զԽաչն Տեառն“ (Ապրի Թիվ Մոսկ. երես 55)։

Խաչ պիւտի պատմութիւնը մի և նոյն է ինչպէս որ Հեղինեայ թագուհու գանելու համար է գրւած, միայն անոնն ներու մէջն է զանազանութիւն, հասարակաց կարծիքն է թէ, Առատանդիանոս մեծի ժամանակն է գտնուել, սակայն Եւսեբիոս ժամանակակից Եկեղեցական պատմագիրը ոչինչ չէ յիշում Հեղինէի վարքագրութեան մէջ այս մասին, ուրեմն կարելի է ասել թէ Խաչը գտնուեցաւ Աղողէսի կայսեր ժամանակ Պատրոնիկէ թագուհու ձեռքով, բայց նորա յետոյ երբ որ Հրէայք ապատամբւեցան Հոռոմայեցուցմէն և մեծ խոռ վութիւն վերկացրին Հրէաստանումը՝ մանաւանդ Արուսաղէմի մէջ, որ հակառակ զոլով քրիստոնէից մեծ հալածմունք արին նոցա վերա, և Քրիստոսի Խաչն էլ աւազակներու խաչերի հետ զցեցին մէկ տեղ, որ կորչի, և Երուսաղէմի քանդւելու ժամանակը Տիառոսի ձեռքով բոլորովին կորաւ հետքը, մինչև Առատանդիանոսի ժամանակը, զոր գտաւ Հեղինէ թագուհին և Մակարիոս Արուսաղէմի եպիսկոպոսը արաւ Խաչ վերաց, ոչ թէ նոր բան սահմանելով՝ այլ աւանդութիւնով մինչեւ իրան հասածը, որի անհմանողն է Յակոբոս Տեղայրը որ սուրբ Խաչը բարձրացնելով (և ասւեցաւ Խաչ վերաց), ասաց և այս երգը. „Խաչի Քո Քրիստոս երկրպագագանեմք, և զթաղումն Քո մեծացուցանեմք, և զսուրբ զյարութիւնդ Քո փառաւորեմք, եկայք հաւատացեալք երկրպագեցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։ Ամսն զի եկն և մարդ եղեւ և Աստուծ, ամենայնի, խաչի և մահու համբեր, և ՚ի ձեռն Խաչին Խրոյ շնորհեաց պարզես աշխարհին։

Արով զմահ կոխեաց, զդժոխս աւերեաց, յարոցեալ ի մեռելոց ազանեաց զմեզ, վասն որոյ և մեք հաւատացեալքս Քրիստոսի Ծատուծոյ մերոյ երկիրգաղանեմք ամենազօր Խաչըն սրբոյ (Յայսմաւուրք Սեպտ. 13): Եյս բանը համաձու ոստած երգումէ Հայոց եկեղեցին Խաչվիրացի աօնին, նոյն պէս և չարչարանաց շաբաթին:

Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօնաւոր:

Կատարութիւնն:

Քրիստոսի հրաշափառ ծնունդը և մկրտութիւնը Առաքեալք տօնումէին խմասին Յունվարի վեցին, ինչպէս երկետումէ և նոցա կանոններից (Վանոն Է), և առաջին չորս գարումը ընդհանուր եկեղեցիք այնպէս էին կապարում, որպէս պէս հաստատումէն նոյն ժամանակ կոյաց մատենաղիրներն, որմի քանի եկեղեցիք փոփոխութին զցեցին ջոկ ջոկ աօնելով զրեցին նոցա դէմ. որպէս Օմիւննեայի Պողեկարարոս եպիսկոպոսը կոպոր, որ Յօհաննուաւեանարանչի աշնկերուն էր: Մակարիոս Արքասաղէմի Պատրիարքը, Մելետոս Կոտիոքայ հայ բապեալը, Գրիգոր Առուշածարան, Անքառառիոս Կոստանդնուպոլսի պատրիարքը, Անքերիանոս եպիսկոպոսը, Հիւլոդիստէս, եպիսկոպոսը, և այլն, նոյնպէս և վերջին զարերումը Ալեքս Գալանոս Լատին կրօնաւոր, Եփրեմ, Համակէրց, և ուրիշներ: Իսյց Հռոմայեցիք առաջին գարուց սկսած բաժան էին տօնում, պատճառ որ հեթանոսութեան ժամանակը ունէին երեելի տօներ, որ մեծ հանդէսներով էին կատարում. ա) Արեգակնարդի տօնը Դեկտեմբերի 25-ին. բ) Յանոս չաստուծոյ տօնը Յունվարի 1-ին, և գ) Պերսեպոն աղջկայ տօնը Փետրվարի 2-ին, մեծ կրակներ վառելով: Եւ որովհեաև նորահաւատ քրիստոնեայք սովոր էին ներկայ գանւիլ այս հանդէսներին՝ ուստի Հռոմայ եկեղեցին այսպիսի հեթանոսական յիշատակները խափանելու համար սահմանեց տօնել Քրիստոսի ծնունդը Դեկտեմբերի 25, թւիտա-

տութիւնը Յունվարի 1 և Տեառնընդառաջը Փետրվարի 2,  
որք իսպանց օրերու հաշով հաւասար են գալիք։ Այսպիս Հր-  
ոսոմ քաղաքի Եկեղեցին էր միայն բաժան կատարում։ Իսկ  
Երեմանեան միւս Եկեղեցիքը իմիասին Յունվարի 6-ին։ Իսկ  
Խրուտաղէմայ Եկեղեցոյ պատճառն էր այս, որ մի և նոյն օրը  
կատարելով Ինդղէհեմումը ծնունդը, և յեաոյ գնալով Յոր-  
դանան մկրտութիւնը մեծ գժւարութիւն էր լինում կատարել  
իմիասին տօնատեղիքի հեռաւորութեան պատճառով։ վասն  
որոյ նոքա էլչորրոդ զարումը սահմանեցին կատարել ծնունդը  
Դեկտեմբերի 25 և մկրտութիւնը Յունվարի վեցին, բայց  
արեւելեան Եկեղեցիքը միասին էին տօնում։ Տօհպէտ Յուլիոս  
Պապը որ վարեց իշխանութիւնը 337—352 թիւը գրեց ընդ-  
հանրական թուղթ, որ Հռոմայ Եկեղեցոյ սահմանադրու-  
թեան համաձայն կատարեն։ Յոյնք, հետեւում էին առաքե-  
լական աւանդութեանը, կատարում էին երկու տօնը միասին  
Յունվարի վեցին, նոյնպէս և Եպիստառումը, որպէս վիա-  
յում էն Եպիփան Արագրացի, Աստիանոս և ուրիշ մատենա-  
գիրներ չորսորդ դարու (Տօմաք տպ. Աբսէտիկ 1852, երես  
24), բայց մօնիկ չորսորդ դարու վերջը սոքա էլ հեակեցան  
Եկրուսաղէմացոց և Հռոմայեցոց։ Իսկ Հայոց Եկեղեցին  
պինդ պահպանեց առաքելական սահմանադրութիւնը մինչև  
ցայսօր և երբէք չծնւեցաւ։

— 9. Ազգի լու ամառը զմե չառավի է կա պատճեն և ամեն  
շի պարհեց և աղքաղաց է և ըստու պատճեն և ամենը  
պատճենն է յ աղքաղաց առ պատճեն շահեց ամենը  
: մասնաւու ամ և աղքաղաց ամառը չառավի է կա պատճեն և ամ

## ԱՐԴՏԵՔԱԿՈՎՆ ՔՆԵԱԹԻԹԻՒՆ

Խնչու են պապականներն առում թէ սուրբն Պետ-  
րոս է զլուխ առաքելոց : Եւ Հռովմայ եկեղեցին է  
զլուխ և օրէնսդիր ամենայն եկեղեցեաց :

**Օ.** Համառօտ մեկնելով Քրիստոսի խօսքերը , զորս  
պապականներն առաջ են բերում Պետրոսի կարծեցեալ միա-  
պետութեան համար , և նորա յաջորդներուն , սկսենք այժմ  
քննել նոր Առակարանը , և բերել այն տեղեց վկայութիւնք ,  
մեր գրաածների ճշմարտութեան համար , և Պետրոսի երեա-  
կայեալ իշխանութիւնը ցրելու համար :

**Ե.** Քրիստոս ընտրեց առաքելոցը Հաւատարապէս ըստ  
այնմ . Աթանաէ ի լեան և կոչէ առ ինքն զորս ինքն կամե-  
ցաւ . . . Եւարար երկոտասանս . զի իցեն զնովաւ և զի  
առաքեացէ զնոսա քարոզել , և ունել իշխանութիւն բժշկելոց  
զյաւս , և հանելոյ զգեաւ (Մարկ . գ . 13—15) . Պուկան  
ասէ . Եւ իբրև այդ եղեւ կոչեաց զաշակերտոն իւր , և ընտ-  
րեաց ինոցանէ երկոտասանս , զորս և առաքեալս անուանեաց (Պուկ . գ . 13) : Յովհաննէս գրէ . ԱՔրիստոս առաջ , ԱՇ  
եթէ գուք ընտրեցիք զիս , այլ ես զձեզ ընտրեցի , զի գուք  
երթայցէք և պաղարելք լինիցիք և պառուզն ձեր կայցէ . . .  
Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ , արտարից զայն (Յովհ.  
ժե . 16) : Եւ սուրբն Պաւղոս տառաքելոց ընտրութիւնը աշ-  
խարհի ստեղծելուց առաջ է զնում . Արպէս ընտրեաց զմեզ  
նովաւ (Քրիստոսիւ) յառաջ քան զլինին աշխարհիւ (Եփես.  
ա . 4) : Եւ յանին յայտնի ցոյց են տալիս հաւատարու-

թիւն, և շասաւ թէ Պետրոս է ձեր պլուխն, այլ ինքն Քրիստոս է, ա) հաւասար ընտրեց, բ) քաղաքելոյ և բժշկելոյ իշխանութիւնը հաւասար տւաւ ամենին, գ) ամենայն բանի մէջ հրամայեց իրան գիմել և ոչ թէ Պետրոսին:

Ը. Հովկութեան պաշտօնը ստացան ամենին Սուրբ Հովկումն՝ ըստ այնմ՝ „Օքոյշ կայէք անձանց և ամենայն հօտիդ, յարում եղ զձեզ Հովին Սուրբ տեսուչս, հովուելը ժողովուրդ Տեառն“ (Գործ. ի. 28): “Այսնպէս տառմէ և Պաւղոս”, “Պաւղոս առաքեալ ոչ ’ի մարդկանէ, և ոչ ’ի ձեռն մարդոյ, այլ ’ի ձեռն Յիսուսի Քրիստոսի” (Գաղ. ա. 1): Եհա՛յայտնի ապացոյց որ Հովին Սուրբ է կարգում հովիւներ և ոչ թէ Պետրոս, ինչպէս ուրիշ աեզ ասումէ Պաւլկաս „Մինչդեռ ՚ի պաշտօնան Տեառն կային և պահէին, ասէ Հովին Սուրբ որոշեցէք ինձ զՊառնարաս և զՍողոս ՚ի գործ յոր կոչեցեալ է իմ զգոսամ“ (Գործ. ժկ. 2): Եւ եթէ Պաւղոս ընկալաւ Քրիստոսից և ոչ մարդուց, որչափ ևս տառաւել միւսները, որք Քրիստոսի հետ շրջեցան, “Արամէն ընկ և Կրամէն ուղարկեցան:

Թ. Քրիստոս դատելու իրաւունքը՝ հաւասարապէս աղբւաւ տասներկուսին, ինչպէս զբումէ Մատթէոս, “Եսէ ցնոսա Յիսուս: Եմէն ամէն ասեմ ձեզ, զի դուք՝ որ եկիք զինի իմ, ՚ի միւսնզամ գալստեան՝ յորժամ նատցի Որդի մարդոյ յաթու փառաց իւրոց, նատջեք և դուք՝ յերկոսասան աթու դատել զերկոտասան ազգս Խայէլի” (Աշտ. ժթ. 28): Եթէ տասներկուսն էլ հաւասարապէս կարդւեցան դատաւորներ Այրա երկրորդ գալստեան ժամանակ, ուրեմն՝ նոյն դատով զական իշխանութիւնը անկախ մէկզմէկուց ունին և երկրի վերադատել հերձուածողներուն և մոլորածներուն ։ և ոչ ինչպէս անաբանում են պապականներն թէ „զատասանը պիտի խնդրել Հովկույց Ակեղեցուց“:

Ա. Քրիստոս Տերն մեր բացասական խօսքով արգելեց իւրաշակերտներուն, որ նոցամէջ չլինի մեծութիւն, իշխու

զութիւն և տիրողութիւն, ուրեմն և ոչ միապետական գլուխ, կարգումնենք սուրբ Աւետարանի մէջ, որ առաքեալքն երեք անդամ վիճեցին մէկմէկու հետ, թէ ո՞վ նրանցմէն մեծ է, և այս ցոյց է տալիս որ Պետրոսին մեծ չէին ճանաչում, այլ իրանց հետ հաւասար և իւրաքանչիւրն էլ ցանկանումէր մեծ լինել: Այս խնդիրս եղաւ այն բանից յետոյ, որ Քըրիստոս ասաց Պետրոսին, թէ „ուու ես վէմ, և այնու: Խնչ պէս վերին ասացինք, այն վէճ ն պատահեցաւ այլակերպութիւնից յետոյ ճանապարհի վրա (Մատ. ժը. 1: Մարկ. ժ. 32: Պուկ. ժ. 46): Եւ այս անդամին շասաւ նոյցա Քըրիստոս՝ թէ ինչո՞ւ էք զուր անզը կովում, չէ՞ որ Պետրոսին կարդեցի ձեր վերա մեծ, այլ ընդ հակառակն՝ խնդիրն է արքայութեան համար, պատճառ որ իրանց հաւասար էին զիտում երկրի վերա, և պատասխան ընկալան՝, թէ թէ ոք 'ի ձէնջ կամիցի առաջին լինել՝ և խոնարհութիւնը վրա բերաւ՝ անդիցի ամենեցուն պաշտօնեայ՝, երկրորդ՝ Օքբենդեայի որդերանց պահանջմունքից յետոյ (Մատ. ի. 25: Մարկ. ժ. 42), ասաւ Քըրիստոս „Պիտեք՝ զի իշխանն աղջաց տիրեն նոյցա, և մեծամեծք իշխեն նոյցա, ո՞չ այնպէս իցէ՝ և 'ի ձեր լում միջի, այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել, եղեցի ձեր պաշտօնեայ՝. որով ցոյց ուաւ՝ թէ զուք ամենքդ էլ հաւասար էք աստիճանով, վասն որոյ և ոչ ոք ձեզմէն չունի իւրաւունք բաց ի խնձմէն տիրելու և իշխելու, և ով որ կամենումէ մեծ լինել իմ արքայութեան մէջ, նա խոնարհութեամբ պէտք է ծառայէ ձեզ, իսկ եթէ խոնարհութեամբ և ծառայութեամբ պիտի մեծ կանչւի՝ հապա Պետրոսի կարծեցեալ յաջորդներն Հռովմայ պապերն ի՞նչ ծառայութիւն արին իրանցմէն պատիկներուն, քանի՞ անմեղ արիւններ թափեցին, քանի՞ թաղաւորներ վեր զցեցին աթոռից. ուրեմն Պետրոսի նման չեն կարող խոնարհել որ արդելեց Կուռնելիունին իւր ոտքը համբուրել (Պործ. ժ. 25), իսկ նոքա (պապերն) անխղճաբար իրանց ոտքերն են համրուրել տալի,

Նկարած ունելով կօշիկների վերա խաչ։ Եւ երրորդ՝ վերջին  
ընթրիքից յետոյ, զօր մէսակ Դուկասն է յիշում (Դուկ. իլ.  
24), որոց նոյնպէս պատասխանեց Քրիստոս. „Խագաւորք  
ազգաց տիրեն նոցա, և որ իշխենն նոցա բարերարք կոշին,  
այլ դուք, ոչ այնպէս, այլ որ մեծն է 'ի ձեզ՝ եղեցի իբրև  
զկրտուերն։ Այս տեղ էլ չասաւ Քրիստոս թէ ահա Պետ-  
րոսն է ինձմէն յետոյ ձեր մեծն և գլուխն, այլ հրամայեց,  
որ երկրաւոր ժագաւորաց պէս ափրազ, ու իշխող չլինին։

ԺԱ. Այսպիսի անկարգ մեծութեան ցանկութիւնը, ու-  
րիշ տեղ էլ է արգելում Քրիստոս ասելով „Խայց դուք մի'  
զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ և ամենեքին  
դուք եղբարք էք, և հայր մի' կոչէք ձեզ յերկրի՝ զի ձեզ մի'  
է Հայր՝ որ յերկինս է, և մի' կոչեցիք ուսուցիչ՝ քանզի ու-  
սուցիչն ձեր Քրիստոս է, և մեծն ՚ի ձէնջ եղեցի ձեր սպա-  
սաւոր, որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցին (Մատթ.  
ժգ. 8. 12)։ Այս խրաների մէջ տեսնում ենք, որ Քրիս-  
տոս ոչ այնչափ արգելում է լոկ անւանակոչութիւնը՝ որքան  
փառափրութեան և իշխանութեան ներքին ցանկութիւնը,  
և առաջոց օրինակ է բերում նոցա փարիսեցիներուն՝ որք  
նստան Առվասիսի աթոռին, և քարոզում է թէ դուք չնմա-  
նիք փարիսեցոց իշխանասիրութեանը՝ և ոչ ոքին մի' անւա-  
նէք ժողովրեան իշխող կամ գլուխ՝ և ոչ թէ զձեզ. վասն  
որոյ և ասաց թէ „Օք դուք ամենեքին եղբարք էք։ Աը-  
րամով հաւասարութիւնը նոցա մէջ հաստատելով պատիժն  
առաջ բերեց, եթէ որ փառասիրութեան ախաին հետեւին.  
„Որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցին, և աւելի զգու-  
շացուցանելով համար՝ վայ է աալիս զպիրներուն և փարիսե-  
ցիներուն և առաջնորդներուն, անարգելով նոցա զորձքերը՝  
որք փառասիրութիւնից և իշխանասիրութիւնից են գուրս գալի։  
Վասն որոյ և Պետրոս սովորած լինելով այս պատիրանքները  
արգելում է ամենայն եպիսկոպոսաց, որ ժողովրդեան վերա չը-  
տիրեն և չիշխեն, ասելով „Արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է

Աստուծոյ՝ վերակացու լինել . . . . մի իբրեւ տիրելով վիճակացն՝ այլ լինել օրինակ հօտինն (ա. Պետ. ե. 2): Եւ Պօղոս ասէ „Եյլ ես զԱստուած վկայ կոչեմ անձին իմոյ, զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքա, այլ գործակիցք եմք շնորհացդ ձերոց” (բ. Կորնթ. ա. 23):

ԺԲ: Վոաքելոց հաւասարութիւնն բանովէ տեսնվում Քրիստոսի ասածներից. նախ իւղաբեր կանանցն ասաց „Երթայք ասացէք եղբարցն իմոց” (Մատ. իր. 10), և ոչ թէ Պետրոսին ասէք, և յետոյ կարգեց զնոսա եկեղեցւոյ կառավարիչ և վերակացու, ոչ թէ մէկ անձին՝ այլ տասնումէկին ասելով „Գնացէք, աշակերտուցէք զամենայն հեթանոսս, մը կրտսեցէք զնոսա . . . . ուսուցէք նոցա . . . . Ես ըսդ ձեզ եմ զամենայն առուրս” (Մատ. իր. 19, 20): „Երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զաւեապանն” (Վարկ. ժղ. 15), „Որպէս առաքեաց զիս հայր իմ և ես առաքեմ զձեզ: Փշեաց ՚ի նոսա և ասէ, առեք զշողի սուրբ, եթէ ուրուք թողուցուք զմեղս թողեալ լիցին, և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցին” (Յով. ի. 21—23): Եւ մատնութեան գիշերը երբ խօսումէր աշակերտներու հետ, և պատերներ էր տալիս, միիթարում էր և քաջալերում, ասելով „Եւ ես աղաշեցից զայր, և այլ միիթարիչ տացէ ձեզ, զի առ ձեզ բնակեսցի ՚ի յաւետեան: Միիթարիչ Հոգին Սուրբ ուսուցէ ձեզ զամենայն և յիշեցուցէ ձեզ” (Յով. ժէ, 16—26): Վայս խօսամունքների մէջ յոդնակի բայերն և վերամտններն ցոյց են տալիս, թէ այն ամենայն իրաւունքները իրմէն յետոյ տաւ տասնումէկ աշակերտներուն հաւասար և եզակի բառով չխօսեցաւ: Ուրեմն Պետրոս չէ դլուխ և ոչ միապետական իշխաղ միւսներուն: Վայս, ո՞րչափ պէտք է խղճահարսին Արթոլիկներն, որ ծոմնումէն սոյա մեկնութիւնը, յոդնակին՝ եզակի հասկանալով:

ԺԳ: Վոաքելոց հաւասարութիւնն հաստատվումէ սուրբ Գրքով: Վայս՝ Գործք Վոաքելոց դրքից „Երբեւ լուսն՝ որ

յԵրուսաղէմ առաքեալքն էին, թէ և 'ի Ասմարիա ընկալան զբանն Ըստուծոյ առաքեցին առ նոսա դՊետքոս և զՅովհաննէս" (Դորձ. ը. 14): Արամէն երեւումէ որ առաքելոց ժողովն ունէր իրաւունք Պետքոսի վերա՝ որ ուղարկեցին զնա, զի թէ նա էր եղել գլուխ կամ իշխան՝ ուրիշներին կուղարկրէ և ոչ թէ իրան ինչպէս հաւասար կուղարկէին, ուրեմն չէր զլուխ: Երկրորդ՝ Սուրբն Պետքոս ցոյց է տալիս իրան հաւասար միւսներուն ասելով „Օերիցունս՝ այսուհետեւ առ զաշեմ իբրև երիցակից" (ա. Պետ., ե. 1): Երրորդ՝ Պետքոս ինքն մէնակ ոչ ոքին չէ ձեռնազրել եպիսկոպոս՝ ինչպէս զբումէ և եղիսեպոս եկեղեցական հին պատմագիրն՝ որ ժամանակակից էր առաքելոց, թէ Քրիստոսի համբարձմանից յետոյ, Յակոբոս Տեառն եղբայրն ընկալաւ առաքելոցմէն Երուսաղէմի եպիսկոպոսութեան աժոռոր (Խոսեր. գիրք թ. 7L. 24), նոյնպէս և Գործք առաքելոց գրքի մէջն ինք տես նում (Գործք. ժգ. 2, 3) „Ո՞նչդեռ ՚ի պաշտաման Տեառն կային, ասէ և որդին Սուրբ, որոշեցէք ինձ զԲառնաբաս և Պողոս ՚ի գործ, յոր կոչեալէ իմ զդոսա, յայնժամ պահեալ և աղօթս արարեալ եղին զեռոս ՚ի մերայ նոցա և արձակեցին", Կյու առնը ցոյց են տալի թէ, առաքեալք միասին էին ձեռնադրում, իրանք ձեռնադրուած էին Քրիստոսից, և ոչ ինչ պէս պապականներն են ստում, թէ Պետքոս միայն ձեռնադրեցաւ Քրիստոսից, իսկ միւս առաքեալքն նրամէն, բայց նոցա ստութիւնը երեւումէ յայտնի՝ որ եօթն Մարկաւագներուն, Յակոբոս Տեառն եղբօրը, Պաւղոսին և Յառնաբասին իմիասին ձեռնազրեցին առաքեալքն, և ոչ թէ միայն Պետքոս:

ԺԴ. Եթէ Քրիստոս յայնձնել էր Պետքոսին ամենայն եկեղեցեաց հովութիւնը և հողար, ուրեմն ոչ ոք չէր կարող պարծիլ, թէ ինքն կրումէ այն եկեղեցեաց հոգսերը, զորս ինքն հաստատել էր, բայց Պաւղոս բարձրաձայն աղաղակում է իւր զրած թղթումը Արնթայոց վերա ։ Ուղղ զայլ նէր

զութիւնն՝ և զի հանապաղ խուժանն ՚ի վերայ իմ կուտիւր ՚ի  
հոգը ամենայն եկեղեցեաց“ (բ. Աղմբ . ժա . 28): “Եսին-  
պէս էլ ուրիշ տեղ է զրում, թէ ինքն է հեծանոսներու սե-  
փական առաքեալն, որ աեղ որ քարոշեց, ինչպէս Պետրոս է  
Հրէից ։ Իբրև անսին թէ հաւասացեալ է ինձ աւետարանն  
անթլիատութեան (այսինքն հեթանոսներու), որպէս Պետ-  
րոսի ՚ի ժլիփատութեան (այսինքն Հրէից)“ (Գաղ . բ . 7):  
Եւ Հռովմէացւոց վերա զրումէ թէ ։ Վայ ձեզ ասեմ, հե-  
թանոսաց ; յորքան ժամանակ իցեւ հեթանոսաց առաքեալ  
զպաշտօնն իմ փառաւոր առնեմն (Հր . ժա . 13): Ուրեմն  
ամենայն առաքեալք մէկամէկուց անկախ քաշումէին իրանց  
հիմնած եկեղեցեաց հոգակրը և ոչ թէ միայն Պետրոս ։  
ԺԵ. Քրիստոս է միայն զլուխ և մեք ամէնքս ։ Երա-  
մարմին ու անդամներ ենք, թէպէս նոր Պատարիանումը շատ  
ապացուցութիւնք կան այս բանիս համար, բայց մէկ քանինք  
յառաջ բերենք, նախ ստորագրեալն չէ կարող մէկ բան առ  
նել առանց իշխանի հրամաննին, և Քրիստոս ինչպէս զլուխ  
և տէր առաքելոց ասաց ։ առանց իմ ոչինչ կարէք առնելու  
(Յով . ժե . 5): Ուրեմն Քրիստոս է զլուխ, և չաստ թէ  
առանց Պետրոսի ոչինչ կարէք, առնել, այլ թէ իմ ։ Երկրորդ  
Քրիստոս իրան անւանումէ ։ ՈՒԹՅ : Եւ առաքելոցը Ուռ .  
։ Եթ եմ որթն Ճշմարիս . . . . կացէք յիս՝ և ես ՚ի ձեզ՝ որ-  
պէս ուռն, ոչ կարէ զպտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ  
իցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և գուք, եթէ ոչ յիս հաս-  
տատեալ իցէք . . . . ես եմ որթ, և գուք ուռն (Յով .  
ժե . 1-8): Վայ տեղ էլ Պետրոսի համար բան չկայ : Եր-  
բարդ Քրիստոս մատութեան երեկոյին ոչ ոքին զլուխ ըր-  
կարգեց, այլ ամենքին բարեկամներ և սուրբեր կանչեց, և  
իրանց էլ եղբայրներ անւանեց բաց ի Յուգայից, արգելեց մի-  
մէանց միրա տիրելու և սէրբ զլուխ կարգելով փոխանորդ ա-  
րաւ նրանց, և եղակի բառով ոչ ոքի հետ չխօսեցաւ և ա-  
մենքին էլ հաւասար ցոյց տւեց (Յով . ժգ-ժը .): Զորբորդ

Քրիստոս Երբ որ նախատումէր Փարիսեցոց ասաւ , „վասն այսորիկ իմաստութիւնն Աստուծոյ, ասաց, առաքեցից 'ի նոսա մարգարէս՝ և առաքեալսու (Պուկ. ժա. 49): Իմաստութիւնն Աստուծոյ էր ինքն Քրիստոս և նոյն ինքն ուղարկեց մարդարէիցը և առաքելոցը, որոց հաշվումն էր և Պետրոս, իսկ Պետրոսը չէր Աստուծոյ իմաստութիւն, որ միւսներուն էր ուղարկել, ուրեմն ուղիղ չեն խօսում Հռովմէադաւաններն :

**Ժ. Զ.** Քրիստոս իւր գլուխ լինելը ցոյց ուեց օրինակ ներով, խօսքով, և առաքելոց զործքը և ասածները, նախ Երբ Քրիստոս քնած էր նաւի վրա և ասսաթիկ քամի վերկացաւ, որ նաւը ալիքներից ծածկւեցաւ, ու աշակերտներն մօն գնալով զարթեցրին՝ և ասացին „Տէր փրկեա՛ զմեզ զե կորն չեմք“ (Մատ. լ. 24-27): Յափշան Ասկերերան այսպէս է մեկնում „Որպէս մարդիչ ոք ճարտար, յերկուս իրս կրթէր զնոսա, ճպամբքն՝ զե յորժամ 'ի պատի ինչ ելանիցին՝ խու նարհութիւն ունիցին յանձին, և մի՛ մեծամոիցեն ինչ . . . Մատթէոս ասէ ննջէր, իսկ Մարկոս և զայն ևս՝ թէ զե՞արդ ննջէր, բարձ մի ասէ դոյզն զզիլսով կալր՝ զե ցուցցէ զնա խապետութիւն (իւր) և մեզ ուսուցանիցէ այնու բացում խու նարհութիւնն՝ (Մեկ. Մատ. Ճառ իր.): Եւ այսպէս Քը րիստոս է զեկաւար, առաքեալքն նշանակումէ՝ հերձուածողութիւնը, որով ուղղափառութիւնը տարուրերփում էր, որի խաղաղութեան համար պէտք է զիմել զեկավարին՝ որ է Քրիստոս: Երկրորդ Հօր Աստուծոյ յայտնութիւնն, ոչ թէ միայն առ Պետրոս եղաւ, թէ Քրիստոս է Որդի Աստուծոյ, այլ և ամենայն աշակերտաց, ըստ այնմ՝ „Պոհանամ զքէն Հայր, Տէր երկնի և երկրի, զե ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի զիանոց; և յայտնեցեր տղայոց“ (Մատ. ժա. 25): Աստ Ասկերերանն ասումէ թէ իմաստուններն և զիտուններն են Փարիսեցիքն և զպիքներն, որոցմէն ծածկւեցաւ Քրիստոսի Որդի Աստուծոյ լինելն, իսկ առաքելոցն կոչումէ տղայք, որոց յայտնեւ-

ցաւ այն (Մէկ. Ամառ. Ճառ. լր.), և յետոյ նոցա անձնական դաւանութիւնը իմանալու համար, Ասէ ցնոսա՝ իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Հարցումն է ընդհանրական, բայց Պետրոս ըստ երիցութեան հասակին, սկսաւ ամենքի կողմից էլ անորոշ դէմքով խոստովանիլ տռաջուց եղած ամենքին Հօր Կատուծոյ յայտնութիւնը, թէ „Դու ես Քրիստոսն որդի Կատուծոյ կինդանւոյն՝ ուրիշն Սուրբն Պետրոս պրամափ գլուխ չեղաւ, այլ ամենայն առաքելոց բերան, պատճառ որ ինչպէս ասացինք՝ այն յայտնութիւնն ամենայն առաքելոց եղաւ, երբորդ Քրիստոս առակով ցոյց տւաւ առաքելոց հաւասարութիւնը, ասելով „Մէկ թագաւոր ու զարկեց իւր ծառայիցը, կանչել իւր որդւոյ հարսանիքի հանդիսումը—նրանց՝ որք գտնվումէն փողոցներումը, ուրովչեաւ հրաւիրածներն արժանի չէին” (Ամառ. իր. 1-14): Կյա առակի մէջ թագաւորն է Հայրն Կատուծ, որդւոյ հարսանիքն է արքայութիւնն, որ Յիսո սի Քրիստոսի ձեռքով պիտի լինէր Հրէից փրկութիւնն. ծառ այքն՝ առաքեալքն են, և փողոցներումը գտնւածներն՝ հեթանոսներն են: Եւ Յովհաննէս «Օրոքորեցին աւետարանի մեկնութեան մէջ ասումէ թէ՝ „Քրիստոսի այս բանը՝ աշակերտաց սփորին է նշանակում, որ զնացին աշխարհի չորս կողմը”։ Ուրիշն բալը առաքեալքն էին հեթանոսներու հրաւիրողներ, և ոչ թէ ըստ ոմանց թիւր կարծեաց միայն Պետրոս. և ոչ թէ Պետրոս ու զարկեց զնոսա՝ այլ Կատուծ: Զորբորդ՝ Դուկաս աւետարանին Գործք առաքելոցի առաջին գլխումը պատմումէ Քրիստոսի պատերները որ տւաւ առաքելոց, եկեղեցին հովելու համար, նոցա հետ հաղորդիլը հացով, հրամանը Երրուսաղէմից չհետ անալու, մկրտին Հոգով Սրբով: Կռաքելոց հարցումը արքայութեան գալու համար, և իրան վկայ լինէն բոլոր աշխարհի վերա: Եւ կարծեմ, որ այս խօսքերը միայն Պետրոսին շասաւ՝ այլ ամենքին, զի ըստ Դաւթի, ուղնդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչեւ ’ի ծագս

աշխարհի են խօսք նոյցաւ՝ (Սաղ. ժը. 4): Արամով երեսում  
է, որ Քրիստոս ցոյց չաւառ Պետրոսին՝ ոչինչ նախապատ  
վութիւն, այլ հաւասարութիւն, և Սուրբն Պետրոս երբէք  
չէ սեփականիլ իրան գլխաւորութիւն ինչպէս պատմումէ  
Պուկաս (Գործ. ա. 11), Պետրոսի ասածը՝ Յուղայ Իս  
կարիսուացու համար թէ „ի թիւս մեր էր ընդ մեզ, և հաւ  
նեալ էր նմա վիճակ պաշտամնս այսորիկ“: Եւ վիճն էր  
պաշտօնն առաքելոց, քարոզել և ուսուցանել միմեանցմէն ան-  
կախ: Հինգերորդ՝ Հոգին Սուրբ իջնում էր ամենքի վերայ,  
և ինչ տալիս էր նոցա, այն էին խօսում (Գործ. բ. 4), ինչ  
պէս Քրիստոս առաջադրյն խոսացաւ նոցա „Օք ոչ դուք  
էր որ խօսիցիք, այլ Հոգին Սուրբ“ (Մարկ. ժգ. 1 և այլն):  
Աւրեմն նոցա առաջնորդն էր Հոգին Սուրբ և ոչ Պետրոս,  
ապա և ոչ գլուխ: Ա եցերորդ՝ պատմումէ Պուկաս (Գործ.  
է. 32—36), թէ „ամենքը վաճառածների զինը բերում  
տալիս էին առաքելոց, և նոքա ում ինչ հարկաւոր էր՝ բա-  
ժանում էին“: Արամէն երեսում է՝ թէ հաւասարականներն  
Պետրոսին չեին ձանաչում դլուխ, այլ հաւասար միւսներուն  
Եօթներորդ՝ գրում է Պուկաս (Գործ. ժ. 10—42), թէ  
„Պետրոս Հոգոյն Սրբոց ազգեցութեամբ զնաց Կուռնելիսոս  
հարիւրապետի մօտ, և ասաւ նրան, թէ „Աստուած յարոյց  
զՅիսուս և ետ նմա յայտնի լինել ոչ ամենայն ժողովրդեան,  
այլ մեզ վկայից՝ յան աջաղոյն ընտրելոց յԱստուածոյ, որք  
և կերաք և արքաք ընկ նմա յետ յարութեանն“ և պատշի-  
րեաց մեզ քարոզել ժողովրդեան, և վկայութիւն դնել, թէ  
նա է՝ սահմանեալն յԱստուածոյ դատաւոր կենդանեաց և մե-  
ռելոց: Ահա ամենքն էլ վկայ են, Աստուածումէն ընտրած-  
ներ, ժողովրդեան քարոզեներ և Քրիստոսի սեղանակիցներ  
են: Աւթերորդ՝ եկեղեցւոյ քահանայապետութեան կարգողն  
է Քրիստոս, ըստ այսմ „Եւ զորս եղ Աստուած յեկեղեցւոյ  
այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարդարէս, երրորդ՝  
զվարդապետս. զոմանս աւետարանիչս, և զոմանս հովեւս“

(Պ. Արք. ժր. 28: Եփ. է. 11): Ուրիմն՝ սուրբն Պետրոս չէ կարգող քահանայապետութեան, այլ ինքն հաւասար միւսներու հետ կարգեցաւ Քրիստոսից: Խններորդ՝ Քրիստոս է զլուխ եկեղեցւոյ և մենք մարմին և անդամք նորա, առաջ բերենք Պօղոս առաքելոյ բանը „Եւ զամենայն ինչ հնագանդ արար 'ի ներքոյ ոտից Սորա և զ՛Յա եղ զլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ՝ որ է մարմին Սորա և լրումն, որ զամենայն յամենայնի լնու“ (Եփ. ա. 22, 23): Այլ ձշմարտեալք սիրով ածեցուք 'ի նա ամենայնիւ՝ որ է զլուխ Քրիստոս (Եփ. է. 15): Օք այր է զլուխ կնոջ՝ որպէս և Քրիստոս զլուխ է եկեղեցւոյ, և ինքն է Փրկիչ մարմին (Եփ. է. 23): Եւ նա Քրիստոս զլուխ մարմինոյ եկեղեցւոյ (ա. Արք. ա. 18): Եւ ոչ ունիցի զզլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմին յօդիւք և խաղաթօք տարբերեալ և խոռնեալ, աճէ զամումն Սսառւծոյ (Առդ. թ. 19): Բաղումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս՝ այլ իւրաքանչչեւք միմւանց անգամք եմք (Հո. ժե. 5): Օք անդամք եմք մարմինոյ Սորա, 'ի մարմինոյ Սորա, և յոսկերաց Սորա (Եփես. ե. 30: ա. Արք. ժր.): Այս բանից երեսումէ որ Սուրբն Պօղոս բացի Քրիստոսից էլ ուրիշ զլուխ չէր ճանաչում որին հետեւում են ամենայն եկեղեցիք բաց ի Հռոմայ: Ոչ ոք առաքելոց մէն գտնեցաւ թերեհաւատ և ուրացող ինչպէս Պետրոս: Մինչեւ որ Քրիստոս յանդիմոնեց և սասաեց նրան՝ և Սուրբն Պօղոս հրապարակաւ նախատեց. նախ՝ երբ Քրիստոս զընում էր ծովի վերա, և Պետրոսն էլ Սորա հրամանաւ իջաւ նակաց ու սկսաւ զնալ ջրի վերա, և լնինումէր ծովի տակը, իսկ Յիսուս բանեց նորա ձեռքը ու ազատեց խեղդւելուց, ասելով՝ „թերահաւատ ընդէ՞ր երկմանեցեր“ (Մարկ. ժդ. 24-31): Երկրորդ Պետրոսն ուրացաւ երեք անդամ Քրիստոսին, մինչ զի նոզովեց Սրան, և չըրտորդ Սուրբն Պօղոս նախատումէ նրան կեղծաւորութեան համար, „Երդ՝ յորժամ եկն Անդամ (Պետրոս) յԵնախոք ընդդէմ դարձայ նորա, քանզի զողցես

ստգտեալ իմն էր . . . և կեղծաւորեցան ընդ նմա և այլ  
Հրեայքն, իբրև տեսի թէ ոչ ուղեղ գնան՝ ասեմ. յԱեփաս  
առաջի ամենեցուն, եթէ գու որ Հրեայդ ես, հեթանոսա-  
բար՝ և ոչ Հրեաբար կեաս. զիարդ ատիպես հեթանոսաց լի-  
նել Հրեաբէն. (Փաղ. բ. 11—1): Եցս բանից երեսումէ՝  
որ Պետրոսին կոչումէ ստգտեալ, յանցաւոր, կեղծաւոր, ոչ  
ուղեղ գատող, վասն որոյ յանդիմանումէ՝ և ուղղումէ նրան:  
Բայց նախատել հրապարակաւ և ուղել սխալանքը, կարող  
է ով որ մեծ է, կամ հաւասար է, և ոչ թէ ստորագրեալն:  
Ուրեմն Պետրոս չէր զլուխ առաքելոց, որ այնպիսի յան-  
դիմանութիւն ստացաւ, և եթէ Պօղոս, որ չէր երկոտասան  
առաքելոց հաշվումը և զինքն հաւասար Պետրոսի էր հա-  
մարում (շատ իրաւունքով, որովհետեւ նա ամենից աւելի աշ-  
խատեց), ո՞րչափ աւելի ես միւսներն՝ որ Քրիստոսից ընկա-  
լան հաւասարապէս ամենայն իշխանութիւնքը:

Դրենք այժմ Ատինացացոց և ուրիշ ազդաց վարդապե-  
տայց վկայութիւնքը, թէ Պետրոս չէ զլուխ կամ միապե-  
տական իշխան, այլ ամենայն բանի մէջ հաւասար միւս ա-  
ռաքելոց հետ:

Փելմելիանոս եպիսկոպոս Աւեստու Աւագագովիացոց,  
որ էլ Թաղէոս առաքեալի յաջորդութիւնից գրեց երրորդ  
գարումը Հռովմայ Ստեփանոս հայրապետի վերա, որ Ափ-  
մբկեցոց բաժանեց հաւասարութիւնից, այսպէս „Ըստ ծանր  
մեղք բարդեցիք քո վերա՝ երբ զբեղ բաժանեցիք այնչափ հօ-  
տից, որովհետեւ քո անձն բաժանեցիք, մի՛ խարիր զբեղ զի  
նա է իսկապէս հերձւածող, որ զինքն կրաժանէ եկեղեցյ  
միութեան հաւասարութիւնից, վասն զի ուր կարծում ես թէ  
ուրիշներուն որոշում ես քեզմէն, գու ինքդ զբեղ բաժանե-  
ցիք ուրիշներուց (ի թուղթն Անպ. Հե.):

Հնարին ատինաց ատինաց ատինաց ատինաց Պիկտաւ քաղաքի ըր-  
բուրդ գալումը զբեց Երերիս պապի վերա նկազքի թուղթ  
այսպէս, “Սղոված ես ինձմէն Երերիս, գու և քո ընկեր-

ները . . . կրկին և երբորդ անդամ նզովք քեղ, օրինազանց Լեբերխու (Հելար, իդ. հատակոս):

Ամբոսիոս եպիսկոպոսն Մեղիոլանու, Կատինաց եկեղեցյ երեելի սուբբռ՝ որ ծաղկեցաւ չորսորդ դարումը առումէ „Պաւղոսն սաոր չէ քան զՊետրոս . . . անարժան չէ առաքելոց ընկերութեանը՝ առաջնի հետ քաջէ հաւասրվում, ոչ մէկից սաոր չէ: Ովոր չէ ճանաչում զինքն, անհաւասար (այլոց), լինումէ հաւասար (այլոց)“ (Ամբոս, գիրք բ. յաղագս Հոգ. Սրբոյ):

Սոյն վարդապետն Պետրոսի առաջնորդութեան վերայ այսպէս է խօսում „Դաւաննութեան առաջնութիւն, և ոչ թէ պատւի, հաւատի առաջնութիւն, և ոչ թէ կարգի“ (Ամբոս. զիրք յաղագս մարդեղ. գլ. 4):

Պեղագիոս և Մեծն Պրիզոր պատերն՝ լսելով թէ Կոստանդնուպոլսի Յովհաննէս պատրիարքը վեց դարի վերջումը սահմանեց իրա համար տիտղոսը՝ Ընդհանրական եպիսկոպոս, հակառակ կացան նրան ասելով՝ այդ տիտղոսն, ոչ մէկ եպիսկոպոսի ամեններն չէ պատշաճում, և Պրիզոր պապը զրեց, թէ այդ անունն բոլորովին է հայհոյական, թիւնաւոր սնոսի, ամբարտաւան, պիղծ, յիմարական, գերաքրիստուական, գիւտական, և այլն (զիրք գ. թղթ. 32, 34: զիրք գ. թղթ. 4, 24, 30, 36 և այլն): Վայ պատճառաւ զրեց Թեսազանիկեցոց Եւսեբիոս եպիսկոպոսին զանդատանկք այսպէս „Խմացած լինի քո եղբայրութիւնդ, թէ Կոստանդնուպոլսի եկեղեցյ Յովհաննէս առաջնորդը Վատուծոյ հակառակ, եկեղեցյ խաղաղութեան հակառակ, ամենայն քահանայից համար նախատինք և անարդանք, անցկացաւ համեստութեան և հեղութեան սահմանը, և ժողովքի մէջ անիրաւաբար սեփականեց իրան ամբարտաւան և ժանտախտալից անունը, Ընդհանրական: Վայ և Տիեզրական (եպիսկոպոսի), և մեր նախորդ բարեյիշատակ Պեղագիոսը ճանաչելով այն ժողովքի ամենայն զործքերը . . . . բոլորովին

Համարեց ոչինչ (զիրք է. թղթ. 69), որ և կամ ով ապացուցանել խոր բանը, ասում է, վասն զի զլիտաւորն ամենայն առաքելոց Պետրոս . . . ոչ երբէք կոչեցաւ տիեզերական առաքեալ . . . ըստ որում ամենայն առաքեալք մէկ ընդհանրական զլիտոյ ներքոյ էին, որ է Քրիստոս իբրև ընդհանուր եկեղեցոյ անդամներ։ :

Քրիդոր Բ. պապը՝ դ գարումը ասէ՝ „Առաքեալն Պետրոս Շշմարտիւ է առաջին անդամ սուրբ և ընդհանրական Եկեղեցոյ, Պօղս, Անդրէաս և Յովհաննէս ի՞նչ են, քան թէ մասնաւոր ազգերի զլուխ՝ և սակայն ամենքն էլ եկեղեցոյ անդամներ են մէկ զլիսի ներքոյ, որ է Քրիստոս“ (զիրք. է. թղթ. 18):

Տեսնարդոս տօնելի սուրբն Լատինաց՝ որ ծաղկեցաւ 12-դ դարումը, զլումէ Եւղինէսոս պապին այսպէս՝ „Առաքելոց արգելած է տիրելը, գնա ապա դու և Համարձակիր սեփականել քեզ կամ տիրողական առաքելութիւն, կամ առաքելական տիրողութիւն։ Եթէ երկուսն էլ կամենում ես ունենալ երկուսն էլ կողցնես . . . դիցուք թէ մէկ ուրիշ եղանակով սեփականես քեզ այս (տիրողութիւնը), բայց առաքելական իրաւունքով չէ, զի և ոչ նա (Պետրոս) կարաց տալ քեզ այն բանը՝ ինչ որ չունէր ինքն, ինչ որ ունէր այն տըւաւքեզ, „այսինքն է“ եկեղեցեաց հոգու ինչպէս ասացի։ Մի՛ թէ ետիրողութիւն։ Լիր նրան, վեճակներին, ասում է, չտիրէք, այլ օրինակ կացէք հօտին։ Եւ չկարծես թէ այդ միայն խոնարհութիւնը ցոյց տալու համար է ասել, և ոչ Շշմարտութեամբ, աւետարանի մէջ կայ Տիրոջ ձայնը, թէ „աղգերի թագաւորները տիրումեն նոցաւ“ (զիրք բ. զլ. 6):

Դարբիէլ վարդապետ Անիբթարեան ուխտից թէպէտ զանազան զրութեան մէջ բնաբանները ծուռն է մէկնում, բայց բոլորովին չէ կարողացել ծածկել Շշմարտութիւնը, ինչպէս Պօղոսի թղթերի մէկնութեան մէջ այն բանի վերա, թէ „Ասեդ զոմանս առաքեալս, զոմանս մարդարէս, և այնու“ (Եփես.

դ. 11): Ասէ „Ըռաջինք Եկեղեցոյ մէջ, իբրև զլուխ մարմա-  
նոյ են առաքեալք: Եկեղեցոյ հաստատութեան մէջ նոքա են  
առաջին” (Հատ. ա. եր. 294): Ըռաքելոց և նոցա յաջորդ-  
ներու հաւասարակշիռ իշխանութեան համար շատ բան զլ-  
րեցին Ախորիանոս (զիրք յաղագս միութեան եկեղեցոյ), Ամբ-  
րոսիոս, Աերոնիմոս, Կատաղիս, Աղեքսանոր, Պիտրոս Աօլ-  
էդ, պապն Գևելարիոս, Գևելարինոս (զիրք դ. յաղագս հայր-  
Հռովմոց գլ. իդ.) և ուրիշ շատերը պապականներուց:

Բաւական համարելով այս ամենայն վերե գրած ձըշ-  
մարտութիւնքը, որք միանդամայն ցրումեն պապականներու  
գրւածքները, վերջացնենք մեր խօսքը, խոստովանելով թէ  
Քրիստոն է միայնակ զլուխ եկեղեցոյ, և մենք հաւասա-  
ցեալներս “Եղոք մարմին և անդամներ:

### “ՀՅՈՒՄԱԾ ԵՇԽԵԾ ՀԻ”

№ 1 և 2, Եպոպիլ ամսոյ այս առարւայ օրագրի

մէջ գրւածքի դէմ պատասխան:

Պ. Ստեփանէն խօսելով „Գարուն” ամսագրի № 1 և  
2 տետրերի վերա, նկատում է և մեր գրածը վերնագրով  
„Ստորագրութիւն Թիֆլիզոյ” այսովէս՝ „Թիֆլիսի ստորա-  
գրութիւնը մի անկատ գրված է; բոլորովին աւելցրդ էր սովել-  
երք մեր օրագրի մէջ կար Թիֆլիսի գեղեցիկ ստորագրութիւն  
Բայց գորանից լաւ գրված ևս չկայ օրագրի մէջ”:

Այս գրւածքի վերա շատ զարմացայ, առումեմ զարմա-  
ցայ, — այն պատճառաւ, որ Պ. Ստեփանէն իւր ուսումն առ-  
արտելով Մոսկվայի համալսարանում պատմաբանական ֆա-  
կուլտէտում սատցել է կանդիտատ կոչումն, և այժմ Ակրա-  
սեան դպրոցի աշակերտիս գրւածքն է քննում, և սրանով  
կանգնումէ ինձ հետ մէկ աախտակի վերա: — Փառք ևս պա-

տիւ ինձ, — այժմ՝ տեսնենք թէ պատմութեան ջշմարտութիւնը  
ո՞ր կողմը հՀզօրացնէ:

Ես շատ շնորհակալ կլինէի Պ. Ստեփանէից, եթէ նա  
իմ գրուածքս որպէս աշակերտի ուղղելէր, ըստ որում շատ  
լաւէր ճանաչում ինձ իւր երեք ամսական ուսուցչութիւնով  
“Երևանի գլուխում”, և իմ սիալներս ցոյց տալով՝ ես ա-  
ւելի յառաջադիմութիւն պիտի ստանայի ապագայ ասպարէ-  
զի մէջ, և ոչ թէ իւր զբածի հակառակ վարւէր, ինչպէս  
զբումէ „Գարուն” ամսագրի Գերապատիւ խմբագրի գէմ,  
թէ նու վարժապետների իրաւունքը ուսումնարանի մէջ հա-  
մարդումէ „զրո”, Արժան. Հայր, ինչո՞ւ եք զբարտում ա-  
շակերտներին, մի՞թէ այնոր համար, որ նոքա զլուխ, ժա-  
մանակ, միջոց չունին ձեր բոլոր ստութիւնը հերքելու? բայց  
նոցա պաշտպանել մենք միշտ պատրաստ ենք ամեն զբար-  
տութեանց ընդգէմ: Ոչ մի աշակերտի համար խելացի և բա-  
նիմաց ուսուցիչ երեք 0 չէ; ընդ հակառակն, ամենօրեա  
փորձը ցոյց է տալիս, որ նաև երեք ամիս մնալով խելացի և  
բանիմաց ուսուցիչ հետ, աշակերտները չեն կամենում երեք  
մոռանալ նորա յիշատակը: Եւ դուք ինչ իրաւունք եք պա-  
հանջում ուսուցիչ համար, ներեցէք, ճիպոտ չեն կարող ա-  
մենի ձեռին տալ ամեն բոպէին խեղճ. աշակերտի զլսին  
հասցնելու:

Պ. Արժապետ Ստեփանէ՝ Դուք այս զրւածքի տակը  
յարձակվումէք իմ վերա Զեր աշակերտի վերա: Դուք մեզ  
ամենքիս պաշտպանէք հանդիսանում ամեն զբարտութեանց  
գէմ, ընդ հակառակն բոլորովին անուղիղ զբարտում եք, ա-  
սելով, „Ճիֆլիսի ստորագրութիւնը մի անկան զրված է”:  
և նորա անուղիղ լմնելը ցոյց է տալի որպէս թէ Զեր օրա-  
գրի մէջ ապածի գեղեցկութիւնը: Ասումէք թէ „Ճիպոտ  
չեն կարող տալ ամենի ձեռքին ամեն բոպէին խեղճ աշակեր-  
տի զլսին հասցնելու”: կարծեմ թէ ճիպոտ խփողը առաջ  
մխալմունքն է ասում, ապա խփում, իսկ Դուք առանց սը-

խալներս յայտնելու, ուղղակի ծիպուհ էք խփում Զեր մօն  
եղած երեք ամսական աշակերտին: Ասացէք, Պ. վարժա-  
պետ, ո՞ն է անկազ զրուածքը, — ո՞ն է աւելորդը, — ո՞ն է  
Զեր տպածի գեղեցկութիւնը և իմ զրածի տպելութիւնը: —  
Ուրեմն ներեցէք ինձ ասել, որ Դուք թէպէտ քարոզումէք  
քաղաքավարութիւն, բայց ինքներդ չէք կատարում այդ.  
Դուք միշտ պախարակումէք շատերին անտեղի, և Կերսի-  
սեան ուսումնարանի վերա, — աշակերտների վերա միշտ ան-  
տեղի արհամարանօք յարձակվումէք:

Ուրեմն նա է պատճառ իմ համարձակախօսութեանը.  
զի նա երեմն իմ վարժապետ երեք ամսական, և միանգա-  
մայն կանգիտատ պատմաբանական զիտութեանց, արժան չէր  
աշակերտին այնպիսի հարւածք տալ և աշխոյժք սառեցնել.  
— թէպէտ չի սառի երեք, և ոչ թէ հարւածքը կարող է  
վերաւորել: Ես առջե եմ հասարակութեանը քննելու, Պ.  
Ստեփանէի անուղիղ զրածքը, և այժմ ապացուցանեմ  
նորա թէրաւթիւնը թիֆլիզու ստորագրութեան մէջ, որով  
կիմացւի և նորա պատմաբանական զիտութիւնը:

Պ. Ստեփանէի տպած յօդւածը „Թիֆլիս“ վերնագրով.  
է Աւագ քահանայ Յ. Սուրենեանցի: Այս քահանայն, ինչ-  
պէս տեղեկացայ, թիֆլիզից հեռացելէ 1847 թւին Եր-  
ևալիսա և այնտեղից Անարաբիայի վնձակը, ուր գտանվում  
է և այժմ, ՚ի հարկէ նա իւր բացակայութեան օրից չէր ու-  
նենալ թիֆլիզու փոփոխութեանց վերա լրիւ տեղեկութիւն-  
ներ, և Պ. հրատաւ տկողն արել է յաւելւածներ, ինչպէս  
սկզբումը խոստովանումէ „Այս յօդվածը հանել ենք“, Օ՛հա-  
ծանու օրագրից քանի մի փոփոխութիւններով: Կարծեմ թէ  
մեծ մտասմբ, մեր կարծիքով աւելի ուղղութիւն և կատա-  
րելութիւն պիտի լինի ստացած այն յօդւածը, որպէս պատ-  
մաբանական զիտութեանց կանգիտատի սրբագրութիւն. բայց  
այդ յոյսը զուր պիտի լինի ինչպէս փաստերով ցայց կտանք:  
1) „Այս քաղաքիս բերդի վինութիւնը եղելէ 379 թւին

և ինչպէս գրումեն վըացի պատմագրողները, Ա ախթանգ և Ա ախտշլթ, 455 թւին, երբ վըացի բգեշլը Ա ախթանգ Գուրգասլանը տիրապետեց Մենդրելի և Արխաղի երկիրներին, շնութ այս քաղաքը:::

Այս պարբերութիւնից չէ երեւմ ուզելթէ յիշեալ երկու քրոնիկոնից ո՞րն է շնութեան ուզելթիւր, որոց միջոցն է 76 տարի, և այս յառաջացել է Հայկաբանութեան տկարութիւնից, որ պիտի այսպէ զրեր. „Այս քաղաքիս բերդի շնութիւնը եղելէ 379 թւին, բայց Ա քաց պատմաբանները Ա ախթանկ և Ա ախտշատ զրումեն՝ թէ ։, երբ Ա քաց բգեշլ Ա ախթանգ Գուրգասլանը տիրապետեց Մենդրելի և Արխաղի երկիրներին, շնութ այս քաղաքը 4 5 թւին։ թէպէտ ոճր պարզեցինք, բայց բաւական չէ, զի այս երկու տարեթերի մէջ անշատ հարկաւոր է պատմաբանական քննութիւն, թէ ո՞րն է ստոյգ, և թէ 379 թւին ո՞վ շնութ բերդ։ Այս տարակուսանքի լուծումն, կարդայ ցանկացողը „Գարունն ամսագրի 1 տեարը եր. 5 և 59, և գատեն։

2) Թէ „751-ին Օմարը կրկնի հաստատեց այնտեղ մահմետականութիւնն.՝ Այս թւականին Հաղարացոց ամիրապեան էր Մրւան Բ-ը։ Բայց թէ ո՞վ է Օմար, ամիրապետ է արդեօք թէ սասիկան, չէ զրում պարզ։

3) Թէ „30-ին Թփիլիոր իսպաս աւերակ դարձաւ.՝ Բայց ո՞նմից, չէ դրում, իսկ պատմութիւնը ցոյց է աալիս, որ Յունաց Թմովիլոս կայսր 830 թւին մեծ պատերազմ ունէր Հաղարացոց հետ, և Հայաստանին էլ մեծ վնաս հասցրեց։

4) Թէ „Հապրատունիները այն ժամանակները (830-ից) երկրորդ անգամ առան քաղաքը և միացրին Հայաստանի հետ.՝ Հաղրատունեաց թագաւորութիւն այդ ժամանակը չկար Հայաստանում, այլ սկսեցաւ 88 թւին։ Իսկ Ա քառաստանը միացաւ Հայաստանի հետ Աշոտ իշխանաց իշխանի ժամանակ 859 թ. և այն ամիրապետի հրամանով։

5) Թմէ „Սարակինոսները կործանեցին Թմիֆլիսը, և այս նուհետեւ կրկին խաղալիկ գարձառ Վրացիների և Պարսիկների ձեռին“ : Այլ թէ ե՞րբ՝ չկայ տարին : Թմէ „Պալալ-Էտաին շահը գարձեալ Հիմնայատակ արեց“ — մոռացելէ և այս տեղ տարին 1226 : Թմէ „Թմիֆլիսն և Վրաստանը աւելի քանդեց Լանկթամուրը“ : Պ. Սահփանէի կարծիքով Թմիֆլիպն ու Վրաստանը ջոկ ջոկ տէրութիւններ են, և տարին մոռացելէ զրել 1394 :

6) Թմէ „1578-ին Պարսիկները և Օսմանցիները բաժան նեցին իւրեանց մէջ Վրաստանը և Թմիֆլիսը ընկաւ թուրքերի բաժինն“ :

Այս բոլորովին հակառակ է սասյդ պատմութեան, պատճառ որ ինչպէս մէնք եր . 60, թէե ամենակարծ, ցոյց տը վինք որ, 1578 թւին Ղարա Մուստաֆա, որ և Լալա փաշ շա առաւ Թմիֆլիզը Սիմն թագաւորի ժամանակ, իսկ բաժանել երկիրը Պարսից և Օսմանցոց մէջ է անստյդ և հետի պատմաբանական ճշմարտութիւնից և ուղեղ դատողութիւնից, որովհետեւ այդ երկու ազգերը երբէք չեն ունեցել խաղաղութիւն միմեանց հետ, այլ միշտ պատերազմ, և մէկ մէկու ձեռքից յափշտակել իշխանութիւնը : Եւ ուղեղ պատմութիւնն է այս : Սուլտան Մուրատ 1577 թւին իմանալով թէ Պարսից տէրութեան մէջ խոռովութիւն կայ, ուղարկում է Ղարա Մուստաֆա փաշային մէծ զօրքով, որ առնում է Երեանը, Սահփանէ և Թմաւրիզը, և միւս տարին՝ այն է 1578-ին փախցնում Վրաց Սիմն թագաւորին, առնում է Թմիֆլիզը և շնումէ, այս տեղ և ուրիշ տեղերում բերդեր, և այս ժամանակին շինւեցաւ հին բերդի կից միւս բերդը Սօլօլակի վերա, և յետոյ յարձակում է Պարսից քաղաքների վերա Կովկասի կողմը մինչեւ Դարբանդ, ապա Գեանջա, Ղարաբաղ, անցնում է Գիլան, և համարեա՛ թէ Պարսկաստանի բոլոր մասը Վասպից և Երասխ գետի այս կողմը, և մասն ինչ այն կողմը ընկնում է Օսմանցոց իշխանութեան

տակ մինչև Շահաբբասը, այն է մինչեւ 1603 թիւը։ Խակ  
Արմոն թագաւորը երկու տարի փախառական շրջելուց յետոյ  
հալածումէ Օսմանցոց 1581 թւին։ — Վեր մնաց արդեօք  
Վրաստանի բաժնելը Պարսից և Օսմանցոց մէջ։

7) Թաէ „Քաղաքիս անցած մեծամեծ շինութիւնների և  
փառքի վկաներ մնացին միայն հոյակապ եկեղեցիները և եր-  
կու բերդերի աւերակները“ — մէկ բերդը յիշելէ, որ շինուած  
379 թւին, իսկ միւսը միայն այս տեղ ենք տեսնում առանց  
շինութեան թւատկանի։

8) Թաէ „ին բերդի մէջ կան ցայսօր հին ատրուշանների  
կամ կրակատունների աւերակները“։

Մէկ հատ ատրուշան ամբողջութեամբ կայ բերդի ժայ-  
ռի ստորոտումը, ոչ հեռի Տեղիսէհեմ եկեղեցուց։ Խակ հին  
բերդումը կարծեր թէ չկայ։

9) Թաէ „Քաղաքը . . . Առւր գետի երկու կողմից գաշ-  
տային գիրքից գեղի սարերն են բարձրացած“ — Վէ թէ գաշ-  
տային գիրքից, այլ ձորային գիրքից, և ոչ թէ գեղի սա-  
րերն, այլ գեղի ժայռերն կամ քարափներն են բարձրացած։  
Սար և ժայռ զանազան նշանակութիւն ունին, ինպէս որպա-  
և շալա։

10) Թաէ „Առւրը (Շուշանի) նահատակութեան տեղն է  
փռքրիկ մատուռ, բերդի սարի ստորոտին, կամու բջի առաջ“։

Շուշանիկի նահատակութեան տեղը չէ այն, իսկ գե-  
րեզմանն է Մեսեխի եկեղեցումն ձախակողմեան խորանի մէջ,  
և փռքրիկ մատուռն բերդի քարափի ստորոտին կոչվումէ  
Արօ, որ է մէկն Վրաց սուրբերից։ Տես „Գարուն“ 1 տեսքը  
երես 61 և 62։

11) Թաէ „Առւր գետը, որի մի կողմը առաջ երեք մաս  
էր բաժանվում, բայց այժմ իւր 6000-ի չափ քառակուսի  
մղոն տարածութեան վերա բաժանվումէ զանազան թաղեր“։

Պ. Պաւլ Վշեսլաւցովը 183 թւի ստորագրութեան  
մէջ ասումէ՝ թէ Թիֆլիսն է քառակուսի 9 վերստ 250 սա-

ժէն, իսկ գլ. Ատեփանէն 6000 մղն, որ կանէ 42,000 վերատ,  
որ 20 տարւայ միջոցում բնակիչների բազմութիւնը և այդիքը  
բռնել էն 41,990 վերատ 250 սաժէն առաջինից աւելի:

12) «Բազարի մասներն է թւում, » և ին քաղաքը՝  
ո՞րն է չէ գրում, տես պարզը Գարուն 1 տեսոր եր. 61.  
»Տափիթաղ, Գարեթուբան«, երկուսն էլ մէկ անուն է, մէկն  
հայերէն և միւսը վրացերէն բառերով: »Է ամի գիւղը՝ փո-  
խանակ Շահի գիւղի: »Օրթածալա, Դրահճալա և Արծա-  
նիս« այդիք են, և ոչ թէ բնակութեան տներ, թէպէտ մի  
քանիտում կան շնութիւն ամառաւ ժամանակ, երբեմնապէս  
կինալու համար: »Ապճալա«, առ ամենեին քաղաքի մասն  
չէ, այլէ զիւղ, պատկանեալ կնեազ Գուրամովներին:

13) Յօնէ »Հայերը ունին 28 եկեղեցներ« — չորսն աւելի  
է գրել:

14) »Աւթունի շափ գործարաններ կան«. գործարան  
կնշանակէ Փարբեկա կամ զափող, բայց քատն էլ չկայ:

15) »500-ի շափ պանդոկներ«: — Եթէ պանդոկ բառը  
իջևաններն է ասում, որ նորա բուն նշանակութիւնն է, կարծեմ  
թէ 100 էլ չկայ. իսկ եթէ զինետունն է նշանակում՝ չգիտեմ  
են այդ, որովհետեւ համարած չեմ:

16) »Քը որներ մինչև 100«. ակուսիսներինն էլ որ  
հաշւենք հազիւթէ երեք հարիւրի համարի, որովհետեւ աւ-  
մեն տեղ ջուր չէ բղիում:

17) »Յժվլիսի շինաձնների մէջ հնագոյն է Փոխարքայի  
տունը և Կերպարանը ուսումնարանը«: Վոռացելէ աւելի  
հնագոյնները, Պարնի, այժմ Անանեանցի և Բէհրուդեանց  
քարւանաարէքը, Եղան Յարութիւն Շեմազանիան Աշա-  
դանեանցի տունը:

18) »1836-ին հաստատվեցաւ այստեղ . . . Արատանի  
և Խմերէթի Հայերի վեճակային կօնսիստօրիա«: — Տարձրա-  
գոյն կարգադրութիւնը հաստատեցաւ 1836 Ապրիլ 11-ին.  
իսկ Կօնսիստօրիայն 1837 թւին Ապրիլ ամսին բացւեցաւ:

19) Յօհիֆլեսցին նախապատճեմէ համարում իւր սովորութիւնը՝ ապրուստի և հաղուստի տեսակը, և օտարների առաջաշխատումէ փայլեցնել իւր նահասպետական ազգային կեանքը։ Ա Կահապետական ազգային կեանքը և նորա պահելու մեծ նշանակութիւն ունի, այդ կոչվումէ ոսկեդար, նահապետական կեանքը զլիսաւորապէս բազկացնում էր մի ընդհանրական սովորութիւն Յօհիֆլեսի մէջ։ 1) տան իրաւունքը ամենայն բանի մէջ է ներսինը տանտիկնոց ձեռքին, որ է սկեսուրը, կամ սորա մահից յետոյ մեծ հարսը, իսկ արտաքինը՝ որդիքը կաշխատէին և վաստակը կտային հօրը, եթէ հայրը չկար՝ մեծ եղօրը, և իմիամին էին կենում, իսկ այժմ շատ սակաւ տեղ սկեսաւը կամ սկեսուրը ունին պատիւ։ 2) Վինարմատը ամենեին չէր կարող փողոցը գնալ, և բաղանիս գնալիս պիտի խուլ քուչէքով էր գնացել, դռանը կանգնած կին չէիր տեսնել. իսկ կոյս աղջկերանց ոչ մի ժամանակ, օտարի հետ երեկք խօսիլ չկար, իսկ նատիւ հացու տել կամ շրջել ամենեին ոչ, — տան պառաւը միայն կարող էր խօսիլ, իսկ ջահէլ հարաները երեխանց բերանով, և այժմ դուք ինքներդ քննեցէք։ 3) Հասակաւոր մարդ որ անցնում էր, թէ և ռամիկ լինէր՝ ջահէլները պիտի ոտքի կանգնէին, թէ լինէր և իշխանի որդի, խօսակցութիւնն էր ամենապատկառ դէմքով. իսկ այժմ ինսդրեմ քննեցէք, դուք։ 4) Հասակաւորների հետ մանուկները սեղան չէին նստիլ, այլ պիտի ծառայէին, և մեծերը միշտ պահումէին իրանց կշեռը, ու փոքրերին տեղեք չէին տալ հակառակ խօսք ասել իրանցը։ Իսկ այժմ քննեցէք դուք, ինչպէս որ ձեր զրածի մխանիրը հանելու տեղիք տւողը դուք էք։ 5) Զիր ասած նահապետական հագուստն էր զլիսաւորապէս՝ մարդկերանցը ։ Էգուշալ, իսպակ արխալուղ, խարազի լափչէք, մօթալ գտակ։ Իսկ այժմ եւրոպական, և սովորականն էլ բոլորովին շոայլ և ոչ պարզ, իշխանները՝ բագրաստ մահուգ, նոյնպէս և հարուստները։ Վանանց շորն էր խագակ, ատլաս կամ զարբար,

որ կարումէին չաքերաւոր և առաջեր փեշեր, թեքերը նեղ դլուխները կապած, ոտնամանն էր քօշ ու ծուղէք, ջահելներունը ալ սախտեան, իսկ հասակաւորներինը սև ծուղէքներ։ Իսկ այժմ դուք քննեցեք։

20) Թմիֆլեզ իշխանական գերգտստաններն է զըռւմ, բայց այս է զարմանալին, որ իշխան և ազնիւ բառերը չեն որոշում, թէ ի՞նչ նշանակութիւն ունին իւրաքանչիւրքը, և խառնել է միմեանց հետ, այն է՝ Լոռումիլիքեան և Ենակոլոփեան, որք են ազնւականներ։ Իսկ Աթարեկեան և Սմբատեան ո՞վքեր են չպիտեմ։ Ապա զրումէ թէ „վրացի իշխանների մջես շատ կան, որոնք ծագած են Հայերի ցեղերից, օրինակ, Ծառումանովներ, Մելիքովներ, Խաղբատունիներ, Վնդրոնիկովներ, Օրբելեաններ, Սմբատովներ և ուրիշներ։

Թմումանովներին, Մելիքովներին և Սմբատովներին ընդունումէնք Հայազգից ծագւածներ, բայց Բագրատիօններն կրօնքով Հայ էին, իսկ ազգով ոչ և եթէ կրօնքն փոխէ ազգը, ուրեմն մեզանից դարձած կաթոլիկները և պրօտէստանտները Քրոնիկ են և Կեմեց, — այդպէս կրնդունիք — ոչ. թէ զուզ թուրքանան էլ սակայն ծագումն ունին Հայոցմէն։ Իսկ Անդրոնիկովներ, ամեննեին չեն Հայոց ազգից, և Օրբելեաններն ամեննեին չեն Հայ, այլ Ճենաց աշխարհից, և թագաւորական ցեղեց, որ Ճենրակուր թագաւորի մեռնելուց յետոց, դահի վերա ընկաւ ներքին պատերազմներ, և նոցանից մինն հատւած դալիս է Աքաստան, և Մցիսէթի իշխանը տալիս է նրանց բնակութեան տեղ Օրբելմը, և տասներկու դարումը փախչումէ Լիպարիտ Օրբելեան Գիօրգի Աքաց թագաւորից Պարսկաստան, և նորա որդի Լիպեկումն ստանումէ Դաշրալագեազը Կախիջեանու դաւառում, և ժամանակից յետոց կրկին վերագտունումէն Աքաստան։ Այս անցքով ուրեմն Օրբելեանք Հայ չեն, այլ Ճենաց աշխարհից են, ինչպէս էլ կոչվումեն, „Ճամբակուր-Օրբելեան։ Յանկացողը կար-

դայ՝ „Պատմութիւն Օրբելեանց” տպած Առակա 1858-ին,  
Գ. Ասկան Յովհաննիստանցի աշխատութեամբ։

Ենցեալ տարւա „Առունեկ” օրագրի 12-ի մէջ եղած  
սխալները թողնելով՝ յիշումենք միայն պատմաբանական մէկ  
երեելի սխալ. 453 եր. թէ „319 թւին Հայերը ընդունելով  
Քրիստոնէութիւն,, փոխանակ գրելու 302 թւին։

Ծակապէտ ուրիշ սխալներ էլ կային, բայց այժմ այսպանս  
բաւական է, և ինսդրումեմ ամենքից բաղդատել Պ. Ստե-  
փանէի գրածը և իմ գրածը. բայց պատմաբանական Փա-  
կուլտէտում աւարտողի և Կերպիսեան դպրոցում գեռ ևս ու-  
սանողը մէջ որոշմունքը պահել, ես աշակերտ եմ, իմ սխալն  
ուղղելու համար ուրախ եմ և չեմ ամաչել երբեք, ոչ մաս-  
նաւորի մօտ և ոչ հրապարակական, և կաշխատիմ ապագային  
զգուշութիւն ունենալ գրւածքիս մէջ։ Յուսովէմ, որ մեր  
դպրոցի երեք ամսական վարժապետ Ստեփանէն ընեղանայ  
այս իմ կրիտիկայիս վերա, այլ ուրախութեամբ ընդունէ, և  
մէկ էլ որ պէտք է սպասել դեռ ամենայն գրւած բան ամ-  
բողջ տպագրւի, տպա քննել, և ոչ թէ հէնց սկզբումը պա-  
խարակել և իրանը գովել։ Վայս ի՞նչ կնշանակէ կրիտիկոսի  
կողմից . . .

Ե. Տէր Յակոբեանց

# ՄԵՆՔՆԱԿԱԳԵՐ

## ՏԻՆԵՑԻՈՅ ԺԱՄԱՅՅՈՅՅ (ահաթ)

Գաղղիացի ճանապարհորդն Լէզուկ պատմումէ թէ ուամիկ Ջինումաշխները ինչպէս են նայում ժամացուցին։ „Մի անգամ մեր ճանապարհի վերա պատահեցանք մէկ տղայի, որ եղնէր արածեցնում, և հարցրինք կշան անցկենալով, լրացելէ տասներկու ժամը։ Տղայն նայեցաւ արեգակի վերա, բայց տեսնելով թէ ամսկը բռնած ունէ նրան, և թէ այդ ժամացուցով չէ կարելի հասկանալ, ասաց մեզ՝ „Համբերեցէք փոքր”։ Եւ շուտով վագեց հարեանի բակը և յետ դարձաւ կատուն ձեռքին։ „Տասներկու ժամը չկայ, մտիկ տւեք դուք” ասաց նա, փոքր ինչ բարձրացնելով նորա թերթերունքը։ Մենք զարմացանք նորա խօսքի վերա, բայց նա ամենելին ծաղը չէր անում, և նյին իսկ կատուն, թէսպէտ այս գործողութիւնը հաջոյ չէր նրան, բայց երեսութին սովոր էր այնպէս, որ նրա հետ վարւին՝ ինչպէս ժամացուցի հետ։ Մենք շնորհակալութիւնն արինք աղային և ծիծաղեցանք, սակայն մեր բարեկամները շուտով երեսներուն տին մեր անքաղաքավարութիւնը։ Կոքա հարեաններից ժաղովեցին տասներկու կատուն ցոյց տին, թէ ժամացոյցը նոցա աշքերումը դնումեն կանոնաւոր։ Կատուներու աշքերի պառուզները դէպ ի կէսօրը հետնուշեար սեղմաւմեն, և վերջապէս Շնշւումեն նուրբ, ինչպէս մազը, զծագրութիւնը, ուզգագիծ կահատելով աչքը։ Եզա նոքա քիչքիչ բացվումեն, իսկ կէս գիշերին լաւանումեն մէծ զնառակի ձև։ Մեզ հաւասարեցին, որ իւրաքանչիւր երեխայ շատ շուտ է սովորում կատուներու աշքերով ուզիզ նշանակել ժամանակը։ Եւ յիրաւի, մենք ինքներս համոզւեցանք այն տեղ, որ այդ ժամացոյցները շատ ուզիզ և հաւասար են մանգալի։

—Մէկ զարբին բանելու ժամանակը մի երկաթի կառը աջ ձեռքը մանելով ձղքումէ, արիւնը սկսումէ վագել, ու

խեղջ մարդը հետև ու հետը տկարանումէ։ Շուտով վազումէ մօտիկ բժշկի տուն, բայց Ճանապարհին արինաքամ լինելով՝ բժշկի տունը հասնելուն պէս թուլացած ընկնումէ։ Բժշկը շուտով ուրիշ մէկ մարդու ջերից մինը բացէ անում, և նորա արինը գարբնի ձախ թերի մէջ է վազեցնում քիչ ժամանակ։ Դարբնի խելքը զլուխն է գալիս ու կամաց կամաց աւողջութիւնը գտնումէ։ Այս հնարաւոր բժշկութիւն, զոր միայն զիտնալու համար հրատարակումէնք։

— Արամէն տասն տարի առաջ՝ Արև-Եօրքցի մէկ վաճառական, Պ. Պիռնսթոն, իւր կնոջ և զաւակներու հետ Եւրոպա Ճանապարհորդութիւն գնալով փակումէ իւր սենեակը և բանալիքները տանումէ։ Երկու ամիս առաջ՝ Արև-Եօրք գոտնալով կղարմանայ երբ տեսնումէ, որ մէկ ծառայող գալով իւր մօտ, 210 տօլար է պահանջում Ճամբորդութեան ժամանակը տան մէջ վառած կազի համար։ Ալերջապէս խընդիրը հասնումէ գատաւորներուն։ Դատաւորները երբ շփոթած էին և չգիտէին թէ ի՞նչ վճիռ տալու է, յանկարծ վաճառականի ծառաներուց մէկը գալով յայտնեց թէ՝ „մեր Ճանապարհորդութեան առաջին օրը առաւտուն վաղ իմ աղջիկպարոնս ինձ ուղարկեց մէկ սենեակ մոռացած մէկ բանը բերելու, և թէ մուլթ լինելուն կազը վառեցի և դուրս եկած ժամանակս մոռացայ հանգցնելու, և այն օրից դէսը վառվումէ եղել, որովհետեւ հէնց այսօր հանգցրի։“ Պ. Պիռնսթոն 210 տալերը վճարեց։

Արագ սիրողները թող կարդան հետեւեալը։ — Մայրաքաղաքիս մօտ մէկ գեղում, անցեալ կիրակի օրը, մէկ երիտասարդ գրատ (մարջ) կրոնէ իւր ընկերներու հետ կէս հօփա արագ խմելու համար առանց յետ տանելու բերանից։ Հետեւեաբար, մէծ զաւալթ լցնելով կսկսի խմել, բայց գեռ կէսը չխմած՝ զաւալթը ընկնումէ ձեռքից, նկառումէ գողգղալ ձեռքն ու ուաքը սառումէն և մի քանի բոպէի մէջ ընկնում մեռնումէ։ Խեղջ մարդու աղեքը այրած էին։ Այս պատահմունքի վերա խորհրդածութիւն անելը աւելորդ ենք համարում։

## ՄԱԿԱԿԱՆ ԱՇԽԵՐՀ

Ուորի ծառի վերայ խաւոտ ծաղկիներ են երեսում։ Դուք կարծեմ ծառզարդար կիւրակէ օրը ուուի ծառի ճիւղբերի վերայ էդ խաւոտ ծաղկիները տեսած կլինէք։ (Ե՞րբ է լինում Ռառզարդար կիւրակին)։ Յետոյ երեսումեն հաղիւ նկատելի դիւրամած և անուշահոտ կեչի ծառի տերեները։

Ընցաւ գարձեալ տան օր և պանդուր, խուճուճ, բայց կանաչ կեչի ծառը իրան սպիտակ մաքուր Ծնովը ուրախ, պայծառ և անուշահոտ զարդարվումէ, կարծես թէ տօն օրի համար լինի։ Վեչի ծառիցը յետոյ շտապումէ կակղին, լաստենին և կաղնին։ Զինարու թաթաւոր տերեները շուտով դուրս են գալիս։ Օփերը և ծառերը ընկեր ընկերի առաջ շտապում են պճնվիլ գարունքուայ մի տօն օրի համար։ Ակրիցը ծառերի վերայ կանանչը նոսր և քիչ երեսում, որովհետեւ տերեները գեռ փոքր են, կանաչ և պայծառ խոտերի մէջը տեղ տեղ գեռ էլի սև հողէ երեսում։ Բայց տերեները և խոտը շուտով բուսնում մեծանումեն, և Ապյիսին բոլորը կանաչումեն։ անտառները գարձեալ անթափանցիլ են լինում, բայց դաշտերի վերայ հազարաւոր ծաղկիներ միմեանց հետ խառնված փաթաթվումեն։ Զմեռուայ ժամանակը միակերպութիւն է թագաւորում, միշտ հէնց ձիւն է լինում։

Բայց գարունքուայ ժամանակը ամեն օր մի նոր բան է երեսում, երբեմն բացվումէ խնկան ծաղկիլ, երբեմն խնձորածաղեկը, անուշահոտ հովիտների մէջը բացվումէ պուտը, բայց էդ բանը երեկոյեան ըսկար, երբեմն խոտի մէջը փայլումեն մորու սպիտակ ծաղկիները, որոնք գարունքուայ վերջին հիւթալից և կարմիր պտուղներ են դառնում։ Բալիները, խնձորիները և տանձիները սպիտակ և կարմրախառն ծաղկունով ծածկվումեն։ Բոլորը գարունը տօնումեն, բոլորը ծաղկումէ և անուշահոտութիւն է բուրում։

Ամեն տեղ գարունը միևնոցն ժամանակը չի սկսվում։ Որչափ հարաւէ, էնքան էլ գարունը շուտ է գալիս։

3. Գարունը գալուն պէս թռչունները բազմութիւնով երեւումեն : (Ո՞ր տեղից են նրանք մեր կողմերը յետ դառնում : Ընչուն են նրանք ձմեռուայ ժամանակը ուրիշ տեղ թռչում) : Եռաջ մեր կողմերն են թռչում ագուաւները և իրանց կղկը ղալովը խմաց են անում, որ գարունը սկսվելէ : ‘Արանք համարեա’ միշտ մօտ մարտի 2-ին են երեւում : (Տայց ահա՛ և արտութը, որը ողի մէջը բարձր թռչումէ, երգեց իրան ասսուկահնչիւն երգը : Վրագ և սրաթե ծիծեռնակները փոքր ինչ ուշ են մեր կողմերը թռչում : Սարեակները, տորդիկները, կոցարները, վայրենի աղաւնիները և կկուները մէկը միւսի յետեիցը երեւումեն և էն գաշտերումը, անտառներումը և ծառատուններումն են բնակիում, որոնց մէջը քիչ ժամանակ է, ինչ որ լռութիւն է թագաւ որում :

Օդի մէջը շուտով հարաւիցը գէպի հիւսիս մէկը միւսի յետեիցը գնումեն կուռնկների, վայրենի բագերի, սագերի և կարապների խմբերը : (Ընչուն հարաւիցը գէպի հիւսիս) : Ըուտով և սոխակը սկսումէ իրան քաջահնչիւն երգը : Եզ թռչուններիցը մի քանիսը, վայրենի բագերը, կուռնկները, կարապները ուրիշ տեղ են թռչում, միւսները մեղ մօտ բոլոր ամառը մնումեն : ‘Արանք, որոնք մնումեն, սկսումեն բոյներ շինել, թռչուառումեն, աղաղակումեն, աշխատումեն, ժողովումեն չոր ճիւղեր, զարման, մամուռ, խոռ, կաւ և իրանց եկող կամ թէ ապառնի ձագերի համար բնակալաններ են շինում :

Եշխատասէր մրջիւնները, բազմագյն թիթեռները, անձոռնի բգէղները, իսկ յետոյ անհամբերելի մոծակները և մըժժեխները, հազարաւոր տեսակ թռչուկով և սողացող միջատներ լոյս աշխարհ են դուրս գալիս : Եշխատասէր մեղքանձը, որը տաք փեթակի մէջը ողջ ձմեռը քնելէր, զարթնումէ, թռղնումէ իրան մոմեղէն խուցը և թռչումէ ծաղկներիցը քաղցր մեղք ժողովելու :

Ծատ քիչ փոփնխութիւն է նկատվում ըրբոտանիների

մէջը : Եւատ քիչ են պատահում վայրինի շորքոտանիները : Քայց այսու ամենայնիւ չի կարելի չնկատել, թէ ընտանի անաստոնը, ինչպէս ուրախ է դարունքուայ ժամանակը : Պոմերի մէջը երկար ձմեռը կենալուց յետոյ, ձիաները, կովերը, և ոչխարները ուրախ վազումեն դէպ ՚ի գաշտը և հովիւը էլ չի տանչիցում ու շարշարիվում իբան երկար ձիպոտովը նըրանց տանիցը դուրս անել :

4: Առաջին ձիւն գալովը մարդիքը ուրախ են, բայց աւելի ուրախ են առաջին անգամ ծաղկի դուրս գալովը : Տարուայ ամեն եղանակը բերումէ իբան զուարծութիւնը և հոգացողութիւնը : (Որո՞նք են ձմեռուայ զուարծութիւնները : Վիւղականները ձմեռուայ ժամանակը ի՞նչ են անում) : Տների լուսամտների երկորեակ շրջանակները վերցնումեն, նոր օդ և պայժառ լցոյ է մտնում սենեակի մէջը : Քուշաներիցը էն ձայները, որոնք ամբողջ կէս տարի է որ չեն լսվել երկորեակ շուշաներիցը, հմի պարզ լսվումեն : Խակ զիւղացիների համար ի՞նչքան գործեր են առաջ գալիս, բայց նրանք աշխատանքիցը չեն վախենում:

Զմեռուանիցը յետոյ ցորեանը, աճարը, խոտը և մինչեւ անգամ գարսմանը՝ բոլորը սկսումէ քչանալ, մէկը մարդկանց կերակուր դառնալով, միւսը անասուններին : Պէտք է աշխատիլ որ ուտելիք լինի եկող գարունքուայ և ձմեռուայ համար :

Վիւղացին սայլը սարքումէ, իրուց է զցում փոցիսը, տափանը և չութը, և երբ հողը փոքր ինչ որ տաքանում է և չորանում, նա գնումէ գաշտը : Կա գարումէ, փոցխում է գաշտը և ցանումէ գարնցանը, ինչ որ պէտք է ցանի և ժողովի միենյն տարումը . աճար, գարնան ցորեն, գարի և կորեակ : Պարտէզների մէջը մարգեր են փորում, տնկումեն կարտօֆիլ, սոխ, ոլոռ, լոբի, կաղամբ (քեալամ) . ցանումեն կանեփ, բազուկ, գաղար, շաղգամ : Աթոռանիստ քաղաքների հարուստ մարդիքները ամառայնոց են գնում, ուր այգեսլանները մարգեր և լոքեր են անում, ուր ծաղիներ են ցանում :

Գարունքուայ ժամանակը և աղքատներն էլ են ուրախանում, անելով թէ , փառք Աստուծու . եղանակը տաքացաւու : Աստուծու արեգակը ամենին ձրի լուսաւորումէ , ամենի համար միւնյն է , քիչ փայտ է հարկաւոր և վատ շորերով կարելի է կառավարվել :

## ԵՄԱՆԱԿԱՐԱ

1: Եմառուայ սկզբին ամենաերկար օրեր են լինում: Երեգակը մայր չի մանում և երկնքիցը չի հեռանում քսան ժամ միջնորդը և երեկոյեան արշալոյսը դեռ չի շիջած անհետայնած լինում արեւմաքումը , որ արդէն արեւելքումը մի սպիտակագոյն , նեղ և երկայն տարածութիւն է երեւում , որ նշանակումէ թէ առաւօտք մօտենումէ : Եւ որքան գէպի հիւսիս է , էեքան ամառուայ ժամանակը օրերը երկար են և զիշերները կարճ :

Եմայուայ ժամանակը արեգակը ձմեռուայ պէս չի բարձրանում . փոքր ինչ բարձրանալով նա ուղիղ մեր զլսի վերայ է լինում: “Երա ուղղայ հայեաց ճառադայթները սաստիկ ջեռուցանումեն , բայց կէս օրին մինչեւ անդամ և անդժաբար այրումէն : Ահա , մօտեցաւ կէս օրը , արեգակը բարձրացաւ երկնքի պայծառ կապոյտ կամարի վերայ : Միայն էստեղ էն աեղ ; ինչպէս թեթեւ արծաթեայ գծեր , փետուոր ամակեր են երեւում , — որոնք երկար ժամանակ լաւ եղանակ կանգնելու նշան են գիւղացիների համար : Երեգակը արդէն բարձր զնակ չի կարող և եկ կէտիցը սկսումէ դէպ ՚ի արեւմուն թեքվիլ : Էն կէտը , որ տեղից արեգակը արդէն սկսումէ թեքվիլ միջօրեայ է կոչվում: “Ասցեցէք դէպ ՚ի միջօրեայն և էն կողմը , ուր նայումէք դուք , կլնի հարաւ , գարձէք դէպ ՚ի ձախ , որ տեղից արեգակը բարձրացաւ , — արեւելք , գարձէք դէպ ՚ի աջ , ուր արեգակը թեքվումէ , — արեւմուտք , իսկ մեր յետել հիւսիս , ուր ոչ մի ժամանակ արեգակ չի լինում : Ահա օրին ոչ միայն չի կարելի նայել արեգակի վերայ , ու

բովհետեւ մարդու աչքեր են ծակում արեղակի ճառագայթ ները, այլ և մինչև անգամ դժուար է նայել փայլուն երկնքի և երկրի վերայ, և էն առարկաների վերայ, որոնք արեգա կիցը լուսաւորված են: Արեգակով, երկինքն էլ, դաշտերն էլ և օդն էլ տաքանում և լուսաւորվում են և աչքը ակամայ կանաչ և զովութիւն է որոնում: Արդէն սաստիկ շոք է լինում: Օտոք էլ չի խշխում, և տերեւները կարծես թէ շոքիցը թառամած և կախելած լինեն: Թռոչուները թաղչում են անառողի խորքերումը, ընտանի անտառներ էլ չի արածում և զովութիւն է որոնում, մարդը քրանքով ողողված և սաստիկ դադարած լինելով թռողումէ իրան զործը և բոլորը սպասում են, թէ ե՞րբ կը նուազի և կանցնի շոքը: Քայլ արտերի, խոտի և ծառերի համար շոքը անշուշտ հարկաւոր է:

Եյնու ամենայնիւ երկար չորեինը վնասակար է էն բոյ սերի համար, որոնք տաքութիւն են սիրում, բայց սիրում են և խնաւութիւն, չորեինը դժուարակիր է և մարդկանց համար: Ահա՝ թէ մարդիքը ընչուն են ուրախանում, երբ վաղ վրզում են կայծակոտ ամպերը, թնդումէ որոտումն, փայլ լումէ կայծակը և զովարար անձրել ծարաւ երկին արբու ցանումէ: Միայն երբ ամառուայ ամենաշոք ժամանակը անձրել կարկտախառն է լինում, էն ժամանակը հասած արտերին վնաս է տալիս և շատ հանդեր ու դաշտեր կարկուտը տանումէ: Գիւղացիները սրտով Վատուծուն աղօթում են, որ կարկուտ չգայ:

2: Ամենայն բան ինչ որ սկսել է դարունք, ամառը վերջացնումէ: Տերեւները մեծանում են ինչքան որ հարկն է և մի քանի ժամանակից յետոյ թափանցելի անտառիկը հաղարաւոր թռոչուների անվետափանցիկ բնակարան է դառնում: Քրովի հանդերումը խիտ կամ թէ զալին և բարձր խոտը ծովի նման տատանվումէ: Արա մէջը շարժվում են և բզզում բազմաթիւ միջատներ: (Ո՞ր հանգերն են ջրովի կոչվում) Եյդիների ծառերը իրանց ծաղիկները թափում են. սաստիկ

կարմիր ալուրանը և մորու նման չիկակարմիր սալորները կա-  
նաչ տերեւների մէջը արդէն փայլումեն , ինձորները և տան-  
ծերը գեռ էլի կանաչեն և տերեւների մէջը թագչումեն , բայց  
կամաց կամաց սկսում են հասնել : Միայն գեռ էլի կանաչ  
տիլիայ ծառն և անուշահոտութիւն է բուրում : « Երա թանձր  
տերեւների , նրան հաղիւ սպիտակ , բայց անուշահոտ ծաղկե-  
ների մէջը , լսվումէ մի ներդաշնակաւոր և անտեսանելի ձայն :**Էղ հազարաւոր մեղքաճանձեր են , որոնք երգելով քաղցրա-  
համ մեղքի և անուշահոտ տիլիայ ծառի ծաղիկների վերայ  
բանում աշխատումեն :** Մօտեցէք էղ ծառին , որը երգումէ ,  
մինչև անգամ նրանից էլ է անուշահոտութիւն բուրում :

**Վաղուեան ծաղիկները արդէն իրանց ծաղիկները թա-**  
**փել են և սերմեր են պատրաստում , իսկ միւսները լու ծաղ-**  
**կած են :** Աճարի արտար արդէն բարձրացելէ , հասկ է տուել  
և արդէն սկսումէ դեղնիլ և քամու փոքր ինչ փշելուցը ծո-  
վե պէս տատանվումէ : Գարնան ցանած արտերը արդէն  
ծաղկել են և կարծես թէ սպիտակ կտաւով ծածկված լինին ,  
նրանցից էլ էն միւսնոյն ախորժ մեղքախառն հոսն է բուրում ,  
ընչով որ տիլիայ ծառը մեղքաճանձերին յորդորումէ :

Բայց ինչքան պառւզներ կան և ինչքան սոկոններ : Խոռ  
տի մէջը հասնում է հիւթալի կարմիր մորին , որը կարծես  
թէ հէնց կարմիր կորադիռն լինի : Աարաղաթի պայծառ  
գինտերը թփերիցը կախ են եղել . . . . Ամառուայ դուրս  
եկած պտուզների որ մինը համարես : Մինը միւսի ետեիցը  
հասնումէ :

3 : **Ամառը թէ թռչունների , թէ չորքոտանիների և թէ**  
**միջատների համար առատութիւն է :** Ահա արդէն փոքրիկ  
թռչունները իրանց բոյների մէջը կերակրվումեն : Բայց մինչ  
նրանց փետուրների դուրս գալը , աշխատաւոր ծնողները ու-  
րախ ձայնով սլանումեն օդի մէջը , որոնելով իրանց ձագերի  
համար կերակուր :

**Զագերը արդէն վաղուց իրանց նուրբ և գեռ ևս կիսա-**

փետրաւարիված պարանոցները իրանց բոյնիցը դռւրս են հանում, և կտուցները բացուխուփ անելով, սպասում են, որ մի բան տան իրանց : Իւաւականի կերակուր կայ թռչունների համար . մինը բարձրացնումէ հասկով լիքը հասկը, միւսը շարժումէ հասած կանէփի ճիւղը կամ կացումէ հասած ալուրալը, երրորդը մժեղների ետեկցն է ընկնում, իսկ նրանք օդի մէջը խառնվում են խումբերով : Սրատես բազէն, լայն բաց անելով իր երկար թռեերը, պատառումէ օդը վերև, սաստիկ նայումէ հաւի ձագի կամ մի փոքրիկ անփորձ թռչունի վերայ, որը իրան մօրիցը յետ է մնացել—ահանումէ, և ինչպէս նետ, ընկնումէ խեղճի վերայ, որը յափշտակող և գիշակ եր թռչունի ազահ շանկերիցը չե ապատվում : Ա աղեմի սագերը, դռւրս հանելով իրանց երկար պարանոցները, բարձր ձայնով կղկղում են և տանում են իրանց ձագերը գէպ ՚ի ջուրը, նրանք ուսի ծառի ճիւղերի վերայի ծաղիկների նման մազոտ են և ձռի գեղնուցի պէս էլ գեղին :

Մազոտ և բազմազայն թրթուրը տատանվում է իրան բազմաթիւ ստների վերայ և կրծումէ տերեները և պտուղները : Փայլուն թիթեռները արգէն շատ են թռչում : Ոսկեաման մեղբաձանձը առանց գուգարելու աշխատումէ տիլեայ ծառի, ցորենի անտշահու և քաղցր հասկի բազմաթիւ զանազան գունաւոր ծաղիկների վերայ, ամեն աեղեց ժողովելով էն բանը, ինչ որ նրան հարկաւոր է իրան բազմարուեստ և անուշահու խորիսի պատրաստելու համար : Փեթակների մէջը լսվում են անլուելի և խուլ ձայներ : Մեղբաձանձերին փեթակի մէջը շուառվ նեղութիւն է լինում և նրանք սկսում են արգէն ձագ տալ : բաժանվել նորնոր աշխատասէր թագաւորութիւններ, որոնցից մինը մնումէ տան մէջը, և միւսը թռչումէ իրան համար նոր հայրենիք դանելու ուր և իցէ մի ծառի խուռչի մէջ : Ի այց ճանձապանը ճանապարհին էդ ձագը բռնումէ և նրան զնումէ նրա համար վազուց պատրաստած նոր փեթակի մէջը : Մրջեւը արգէն գետնի տակին

Հողի մէջը շատ ծակեր է արել, պաշառ պատրաստող տնտես պոնէտը արդէն սկսումէ հասած ընկայզները իրան բոյնի մէջը կրել: Բոլորին յարմար բնակութեան տեղ կայ, բոլորի համար բաց արեց իրան առաստ բուռը և երկրի վերայ թափումէ: Բարեպարզե օրոտախառն տնձրե, ծաղիկներ, պտուղներ և թէ խոտեղէնների և թէ ցանքի համար անթիւ սերմեր:

4: Գիւղացու դործերը ամառուայ ժամանակը շատ և շատ են: Ահա նա վարեց աշնցանի գաշտերը և աշունքուայ մօտենալու ժամանակը հացի համար փափուկ օրորոց պատրաստեց: Դեռ նա ըս կարողացած լինելով վերջացնել վարելատեղերը, արդէն հնձելու ժամանակը մօտենումէ: Հնձողները սպիտակ շապիկներով, փայլուն և զբնդպնդուն գերանդիները ձեռներին, դուրս են գալիս դաշտի վերայ և ընկերութիւնով արմատից վեր են տալիս բարձր և արդէն սերմ բռնած խոտերը: Ոուր գերանդիները արեգակի մէջը փայլումէն և զբնդպնդումէն ամեն մի փրաբերելիս: Կոյնակէս կնիկները հսպէս ընկերաբար աշխատումէն փոցիներով և ըորացած խոտը ածումէն բլուրների վերայ: Դերանդիների ախորժելի ձայնը և էն երգերը, որ աշխատաւոր մշակները միասին երգումէն, դաշտերի ամեն կողմիցը լսվումէն: Ահա արդէն բարձր բոլորակ բլուրներ են անում: Մանուկները խոտի մէջն են մանում և միմեանց հետ խօսելով, փորերը բըռնած քոքումէն և զարագեօղ ալվան եղները, խոտերով ծածկված, հաղիւ են կարողանում խոտով լիքը սայլը տեղիցը շարժել:

Դեռ շաւարտած խոտի վեր տալը—հունձը սկսվումէ: Աշնցաներ և ածարը արդէն հասելէ:

Բազմաթիւ հատիկներիցը ծանրացած և գեղնացած հասկը կոացելէ դէպ ՚ի գետինը. եթէ որ նրան, դաշտի մէջը էլե թողնուն, էն ժամանակը հատիկը կսկսի թափվել և Առուծու տուրքը ՚ի զուր փչանալ: Թաղնումէն գերանդիները

և վերցնում են մանգաղները : Աւրախութիւն է նայել, թե  
ինչպէս արտերի վերայ դէպ ՚ի գետինը կոացած էս տեղ էն  
տեղ հնձողների կարդաւորված կարգը բարձր կանգնած աշ-  
նցանը և աճարը հնձում են արմատիցը և գեղեցիկ ու ծանր  
խուրձեր են կապում : Անց է կենում երկու շաբաթ էսպիսի  
աշխատութիւնով, և էն հողերի վերայ, որ տեղ մօտիկ ժա-  
մանակները բարձր կանգնած աշնցանը և աճարը տառանվում  
էր, հմի ամենայն տեղ կարդած ծղնօտներ են ցցված : Իայց  
հնձած արտումք բարձր ոսկենման աշնցանի և աճարի տառ-  
նակներ են դրած :

Դեռ ևս չը կարողանալով ժողովել աշնցանը և աճարը,  
արդէն եկաւ էն ժամանակը, որ պէտք է հնձել գարնան գա-  
րին և խրես կը, յանկարծ տեսնում ես որ, արդէն կարմրել է  
զարնցանը, և մանդագ է կանչում : Ահա կառւահանը փետելու  
ժամանակն է, նու բոլորվին ընկել է : Ահա կանեփն էլ պատ-  
րաստ է, ծտերը թօրունով թուշում են տեղ և կտցահա-  
րում են կանեփի իւղալի համիկները : Ճամանակ է հանել և  
կարտօֆիլը, իսկ ինձորները արդէն վաղուց թափփում են բարձր  
խոտի մեջը : Ըոլորն էլ հասել են, բոլորն էլ պէտք է ժամա-  
նակին ժողոված, մինչեւ անգամ ամառուայ երկար օրեղն էլ  
բաւտկան չեն լինուած նրանց ժողովիլ :

Երեկոյեան ժամանակը մարդիկն ու շեն տուն գալիս գոր-  
ծից : Կրանք դադարած են, բայց իրանց ուրախ երգերի ձայ-  
ները թնդայնում են երեկոյեան արշալցնի ժամանակին : Ա-  
ռաւոար, արեղակի հետ միասին, դիւզացիները կրկին ան-  
գամ բանելու են գնում, իսկ արեղակը ամառուայ ժամանակը  
շրւտ է դուրս գալիս :

5 : Գիւղացին բնշո՞ւ է ամառն էնքան ուրախ, երբ նա  
արդէն էնքան շատ զործել ունի, էն էլ ծանր գործեր : Անձ  
սպորութիւն է հարկաւոր, որ ամբողջ օրը ծանր գերանդիով  
շարժի ձեսները, իւրաքանչեւր անգամ կորելով խոտի լա-  
բանակը, նոյնպէս սովորութեան հետ էլ պէտք է շատ աշ-

խատութիւն և համբերութիւն լինի : Հեշտ չէ և հունձ աւ նել արեգակի այրող ճառազայիթների տակին, կուացած մինչեւ գեախնը, քրտնքով լրված, տաքութիւնից և դադարածութիւնից հեալով : Այս լինչեալով : Այսեցեք խեղճ զիւղացու կնոջ վերայ, թէ ինչպէս նա իրան ցեխոտ, բայց աղնիւ ձեռովքը սրբումէ իրան այրված երեսիցը քրտնքի խոժոռ կաթիւները : Աս մինչեւ անգամ ժամանակ չունի իրան երեխին ծիծ տալ և կերակրել, որը թէպէտ էս տեղ դաշտի մէջը օրօրվումէ Ճօճումը դրված, որը շինած է հողի մէջը ցցած երեք ցցի վերայ : Ժամանանող փոքր քոյրը դեռ երեխայ է և նոր է սկսել մանգալ, բայց նա էլ առանց գործի չէ . ցեխոտ և պատոված շապկով, նա որոները ծալած նստած է Ճօճի մօտ և իրան խոռված եղբօրը աշխատումէ օրօրել :

Բայց ընչո՞ւ համար է զիւղացին ամառն ուրախ, երբ էդպէս շաա դժուար գործեր ունի : Վհ, սրան շատ պատճառուներ ունի : Աս ին զիւղացին գործից բոլորովին չի փախենում, նա դժուարութիւնների մէջ է մեծացած :

Երկրորդ, նա զիւղի, որ իրան ամառուան աշխատանքը ամբողջ տարին իրան կերակրումէ և թէ որովհետեւ Վաարուած լսու եղանակ է արել, պէտք է աշխատել ապա թէ կարող է առանց հացին մնալ : Երրորդ, զիւղացին ըգգումէ, որ իրան աշխատանքովը ոչ թէ միայն իրան ընտանիքն են կերակրում, այլ ամբողջ աշխարհը և էս, և գու, և բոլոր էս մեր շրջաբնակ պարանները, թէ և նրանցից մի քանիսը արհամարտանքով են նայում զիւղացիների վերայ : Աս վարելով և փորելով երկիրը, իրան հանգարտ և խոնարհ գործովը բոլորին կերակրումէ, ինչպէս ծառի արմատները կերակրուումէն իրանց էն հաղարտ պաղաթներին, որոնք կանաչ տերեւներով զարդարված են :

6. Կատա աշխատութիւն և շատ համբերութիւն է պէտք զիւղական գործերի համար, բայց և նոյնպէս քիչ զիտութիւն և քիչ գործառութիւն չէ պահանջվում : Փորձեցէք

Հնձել, և գուք կը տեսնէք, որ սրա համար շատ հմտութիւն է պէտք։ Այդ որ սովոր չէ կերանդի բանացնել՝ նա չի կարող երկար ժամանակ բանել։ Լաւ զէզ զնելը նոյնպէս հեշտ բան չէ, վարելն էլ ամեն մարդու բան չէ, պէտք է մանակալը վարի, այսինքն ով որ զիտէ, բայց որ ցանուի լաւ, հաւասար ոչ ոչ զալին և ոչ նրանից նօսր, ինչպէս որ հարկաւոր էր, — երեմն ամեն գիւղացի էլյանձն չի առնում։ Բացի զրանից, պէտք է իմանալ երբ և ինչ պէտք է անել, ինչ պէս պէտք է սարդել արօրր, փոցիր և տափանր, ինչպէս, զրօրինակ, կանեփը ծեծել, իստակել, իստակած կանեփիցը թել շինել, իսկ թելցը կատ գործել . . . . Ահ, շատ և շատ բան զիտէ, և շատ բան կարող է անել գիւղացին, և նըրան ոչ մի կերպով չի կարելի ագէտ կոչել թէպէտ և նա կարդալ չիտենայ։ Կարգալ և շատ արհեստներ սովորել շատ հեշտ է, քան թէ սովորել էն ամեն գործերը, ինչ որ մի փորձառու գիւղացի պէտք է իմանայ։

«Բաղցը է քնում գիւղացին էղպիսի ծանր աշխատանքից յետոյ, զգալով, որ նու կատարել է իրան սուրբ պարտաւորութիւնը։

Մեռնելն էլ գժուար չէ նրա համար, նրա մշտկած արտերը և նրա ցանած գաշտերը կը մնան իրան մանուկներին, որոնց նաև խմեցրելէ, կերակրելէ, սովորացրելէ աշխատութեան, և իրան փոխանակ, Աստուծու և մարգկանց առաջին մշակներ է կարգել։

## ԵՐԿՈՒՅ:

1: Երդէն Յունիսի 9-իցը օրը սկսումէ քիչ քիչ կարճանաւ իսկ գիշերը երկարիլ։ Մեպաեմբերի 11-իցը օրը կրկնն հաւասարփումէ գիշերին։ Եղ օրն է աշնանային օրահաւասարութիւնը և աշնան սկիզբը։ Եղ թուիցը արգէն սկսում է գիշերը երկարիլ և Դեկտեմբերի 12-ին գիշերը երեք անգամ՝ երկարանումէ օրիցը։ Եղ ժամանակը արեգակը երկնքի

վերայ քիչ ժամանակ է երեւում և շտապումէ մայր մանել և  
թագչել, առաւօտեան ժամի 9-ին դեռ էլք մուժն է, ճաշեց  
յետոյ ժամի 3-ին արդէն հարկաւոր է ճրազներ վառել:  
Ամպերը համարեամ թէ երկնքիցը չեն հեռանում, և գրանք  
ամառուայ էն գեղեցիկ ամպերը չեն, որոնք արծաթեայ սա-  
րերի նման դիզվումէն կամ արծաթեայ ծաղիկներով բարձր  
են փախչում զէպ ՚ի երկինքը. երկինքը կապարեայ դոյնի հա-  
ւասար կառաւով բոլորովին ծածկվումէ: Օգոստոսի վերջին  
օրը սկսումէ ցրտանալ: Միայն առաւօտներն է զովութիւն  
երեւում, իսկ Անպատմբերին երեւումէն երբեմն թեթև սառ-  
նամանիքներ: Վոաւօտեան զարթնելով դուք կր տեսնեք թէ  
ինչպէս է սպիտակել խոտի երեսը կամ հարկանի տան կտուրը  
(տանիքը): Փոքր ինչ յետոյ ջրերով լեքը փռուին էլ, որոնք  
աշունքուայ ժամանակը շատ տեղերումէն լինում, սկսումէն  
գիշերուայ ժամանակը սառչել:

Եշունքուայ բարսկ անձրեները բոլորովին ամառուայ  
սպառնացող անձրեների նման չեն. նրանք անդադար զալիս  
են, և երկիրն էլ արդէն շուտով չի ցամաքում, ինչպէս ա-  
մառն էր լինում: Քամին անդադար փչումէ, հետու տա-  
նելով ծառերի և խոտերի հասած սերմերը և երեխային թրղ-  
թեայ օձը բարձր թողնելու բաւականութիւն է տալիս:

— 2: Օգոստոսի վերջեցը սկսած ծառերի տերեւը սկսումէ  
տեղ գեղնիլ. իսկ Անպատմբերին դուք կր նշմարեք, թէ  
ինչպէս դեռ ևս կանաչ կիչ ծառի վերայ երեւումէն էս տեղ  
էն տեղ խակապէս գեղին և սկինման ձիւզեր. կարծես թէ  
աշունքուայ մահացուցիչ ձեռը մօտիկ անյնելով բռնելէ և  
ճմլելէ նրանց: Վոածին անգամը կեչին է կանաչում, և նա  
էլ առաջին անգամն է սկսում դեղնիլ: Օրէ ցօր աւելանում  
են գեղին տերեները: Դեռ անցնումէ էլք մի երկու, — երեք  
օր, և — գողգողուն բարդին բոլորովին մի գեղեցիկ, ծիրանի  
և ոսկինման դոյն է ստանում: Բայց կատաղի աշնանային քա-  
մին նրա էդ վերջին զարդարանքն էլ է պոկում, օդի մէջը

պտտելով թեթե և չորացած տերեւները, նա ծածկումէ նը-  
րանցով խոնաւացած երկիրը:

Դաշտերը կամաց կամաց դարսակվումէն, ցորենի և ա-  
ճարի տանեակներն էլ սպլերով կրել են: «Օսպիկները անյայ-  
տացել են և գեղնացած, կրկին հասած խոտը, ուր որ նրան  
թողել են, կռանումէ գէպ ՚ի գետինք և որպէս թէ ձին է  
ինդրում: Միայն աշնյանն է բարձրանում հաւառար կանաչ  
մախմուրով: Իսյց էդ փաքը ուշացած փախստականին էլ վթ-  
ռած է շուտով չքանալ: Եզ պատճառով ցորենի սերմերը ան-  
վետս պահպանվումէն ձիւնի տակը և գարնան ժամանակը  
կրկին կանաչ ծիւզերով (պկու) լոյս աշխարհ են դուրս գալիս:

Եմենայն բան փթռումէ, լականումէ, թխանումէ, կորց-  
նումէ ամառուայ պայծառ գոյնը և ստանումէ աշնան միա-  
կերպ, ցիսոս և մնխրադոյն տեսքը: Եզ ժամանակը բնու-  
թիւնը նմանվումէ դադարած և շատ գործեր արած մար-  
դուն, որին քունոր յաղթռումէ: «Բարձեալ անցնում են մի  
քանի: օրեր, և նա, փափուկ և սպիտակ անկողնով ծածկված,  
ամբողջ ձմեռը քնումէ:

3: Մի տեղից միւս տեղ թռչող թռչունները մինը միւսի  
յիւնից ժողովվումէն հեռու ճանապարհի համար: Առա-  
ջին անգամը ծիծեռնակներն են աղաղակ բարձրացնում, և  
նրանք Օգոստասի վերջին յանկարծ անյայտանումէն, նրանք  
զդումէն աշունքուայ մերձենալը, և էդ թռչունների վաղ  
թռչելը նախագուշակումէ ձմեռուայ շուտ դալը: Յետոյ  
վնում են հիւսիսից գէպ ՚ի հարաւ կռունկների, կարապների  
և սաղէրի երկար ձգված գասկերը: Աղաղակով, երբեմն եր-  
կար շղթայով, երբեմն անկիւնով, առաջաւորի հետ առաջ,  
թռչումէն մեղանից ամառուայ հիւրերը: Անասաները ա-  
նօնքանումէն, հանգարափում և դարդակվում, միայն ծանր,  
և խոնաւ աղուան է կղկղում, նասած մերկացած ծիւզի վերայ:

Վհա արգէն ծառերն էլ կանդնած են մերկ, միայն սին  
ծառի վերայ քաշեն ընկած իրան գեղեցիկ ողկոյզները (Ճիթ),

և ցրտին են սպասում: «Դատարկութիւն և լռութիւն է պատաժ դաշտերի և անտառների վերայ: Աւացած, ցեխուտ, և անձրևով սննդված երկիրը տիրապին նայումէ կապարեայ երկնքի վերայ, գոնեայ ձիւնը շուտով ծածկէր նրա անախորժելի մերկութիւնը: Դալիս է և ձիւնը, բայց նա էլլ երկար չի մնում, և մնալով երբեմն մի քանի ժամ, կրկին անբայտանումէ:

4: Աշունքուայ ժամանակը գիւղացու գործերը արդէն բռւակտնի պահասում են, բայց այսու ամենայնին նա անգործ չի մնում: Աշունքուայ սկզբին պէտք է վարել, տափել և աշնցան անելցեաոյ պէտք է դաշտիցը հաշանը և խրձերը բերել կալի մէջը, ծանր խրձերի տակին ծածկած սայլերը ամեն ծանապարհում ճռնչում են: Իերած հաշանը կալն են ածում, իսկ յետոյ սկսում են կասել: Ամառը առաւօտիցը սկսած մինչեւ իրիկնաժամանակը կալ են կասում ամենը կամ ները լծած և յետոյ քամում են—ցորենր գարմանիցը ջոկում են: Վիւղացին կասած ցորենր ջվալների և խարարների մէջն է ածում և ջրաղացն է տանում: Եթէ որ նա կալ չի կասում և չի նասում ջրաղացի մէջ, սպասելով կարգին (Հերթին), էն ժամանակը անշուշտ նա կացինը ձեռքին, իրան խրձերի մօտ որ և իցէ մի բան է շինում: Անիկները գործում են և յետոյ ծեծում են կանեփը, թեփի նման են շինում նոր կանեփը, և իրանց ձեռուուայ երկար գիւղերների համար մանելու թել են պատրաստում:

Բայց այսու ամենայնիւ աշունքուայ գործերը, համեմատելով ամառուանի հետ, շափաղանց քիչ են, և զիւղացին շտապումէ ուրախանալ:

Օգեքը վառում են, ծերերը ժողովում են մի տեղ և իրանց դիսով անցած բաները պատմում են միմեանց ջահելներին խրատ տալով: Աշունքուայ ժամանակը շատ տօն օրեր կան, զիւղացու հարսանիքները միշտ տարու այս ժամանակն են լինում, ինչ ժամանակ գործ քիչ կայ և ամեն բարիք շատ:

Աւրախ և զքօսնող ժողովուրդը պնտումէ հիւր մի խրճիթիցը  
միւս խրճիթը, մի զիւզեցը միւս զիւզը։ Գիւզացին ամառը  
սասարիկ աշխատեց, ուրիմն հարկաւոր է նրան հւնգստանալ  
և ուրախանալ։

5. Քաղաքների մէջը նոյնպէս աշունքը նշմարվում է։  
Եռանց հովանոցի, վերարկուի և կալոշի չի կարելի փողոցը  
դուրս դալ։ Աերեխցը բարակ անձրել զալիս է, խոնաւ և  
փայլուն տանիքներիցը կաթիտումէ ջուրը։ Ոտք ոլկվում  
է խոնաւացած քարերի վերայ։ Վմեն տեղ փոսեր է ընկած  
և ցեխն է։ Խոնաւացած շտփարները տիրապին նայում են։  
Կիւռաւները յուստհասած ձայնով դաս դաս մինը միւսին բր-  
դելով գնում են և նատում են խաչերի վերայ։ Վմեն տեղ սր-  
բում են պատուհանները և գնում են երկրեակ շրջանակները։  
Ահենակների մէջը մուխտ և լրութիւն է լինում։ Փողոցիցը  
աղաղակ չի լսփում, բայց երեկոյեան փշումէ և ոլորփումէ  
բուխարու լուլաների մէջը քամին, և նեղութիւն է տալիս։  
Բայց էդ միհնոյն ժամանակը աշունքը թագաւորանիստ տե-  
ղերումը և մեծ քաղաքներումը թագարօններ, երգեր և ժո-  
զելներ են սկսվում։ Միսցն էս ամենը քիչ է լինում մինչե-  
առ ուրախալի ձիւնը չի սպիրակեցնում փողոցները և չի գր-  
րսափում սանկաների ձանհապարհը։ Էն ժամանակը բոլորը  
զարթնում է, և առլում։ Տաք կրակը ձոփնումէ վառարանի  
մէջը, բուխարիների լուլաներից ծուխը սիւների պէս բարձրա-  
նում է, ձիւնը փայլումէ զոհարեայ բիւրեղով, լուս է վա-  
զում ձին, սանկաները ձուճում են, կարմրումէ ծերի երեսն  
եւ ուրախ է անցինում ձայ մորդու ձմեռուայ կիանքը։

## ՄԱՐԴՈՒՍ ԱՅԵՐԵՅ

Ես մարդ եմ, թէպէտ գեռ փոքր, որովհետեւ ես էնպիսի հոգի ունիմ և էնպիսի մարմին; ինչպէս ուրիշ մարդիքը:

Իմ մարմինս եօթը զլիսաւոր մասունքներից է բաղկացած. Վլիկց, Պարանոցից, Բնից, երկու Չեռներից և երկու Աններից:

1: Իմ Վլուխս ձեռով փոքր ինչ Վնասակի նման է, բայց էնպէս բոլորակ չէ, ինչպէս որ խաղալու գնատակը, — այլ Զուի ձեռ ունի: Իմ զլուխս կողքերիցը մի փոքր ինչ սեղմված է, յետելցը գուրս է ընկած, նրա մի մասը պատած է մազերով, իսկ միւսը ոչ:

2: Վլիկ վերի մասը կոչումէ Պագաթ, յետելցը գուրս ընկած մասը — Օտրծորակ և առաջին մասը — Վէմք:

3: Վէմքի զանազան մասունքները զանազան անուններ ունին, և աչա սրանք են. Ճակատ, քունք, այտեր, աչքեր, բերան, քինլթ, կիակ, ականջները զլիկ երկու կողքերումն են զրիմած:

4: Վլուխս Բնի հետ զիւրաթեք պարանոցամբ է միանում; Էդ պատճառով և ես զլիսվս զանազան շարժագութիւններ կարող եմ՝ անել. բարձրացնել, խնարհացնել և էս կողմը էն կողմը դարձնել: Պարանոցի առաջին մասը Առկորդ է կոչվում:

5: Իմ մարմնուս ամենամեծ մասը Բունն է և նրա շուրջն են դասաւորիմած միւս մասերը. Վլուխս և չորս Կնդամները, այսինքն, — երկու ձեռները և երկու ոտները: Արյալէս Բնի մէջը մի քանի զանազան մասունքներ կան. Առոք, Փոք և Վէմք:

6: Մի ձեռը Չոխ է կոչվում, իսկ միւսը Աջ: «Երանք իսկապէս միմեանց շատ նման են և բարեյարմար են դասաւորիմած իմ Բնիս երկու կողմումը: Չեռները մարմնու Աերին անդամներ են կոչվում, իսկ ոտները — Աերքին անդամներ: Աջ և Չախ ոտներն էլ միմեանց նման են: Շարունակեսցի:»

## ԱՏՈՐԵԴՐՈՒԹՅԻՆ ԹԻԳԼԱԶՈՂԻ

Խ. Տ' Անք ՔԵՐԻԿԵՍՏԵՅՔ և ԿՐՊԵՄԵՆՔ

Ա. Թիգլիզ քաղաքի հասարակութեան կառավարութեան հաշւով տներու թիւը համումէ մինչեւ 5000։  
Քաղաքը բաժանւած է չորս մասը, և ամեն մէկ մասը  
մի քանի թաղ։

1836 թւին Թիգլիզու երեսելի շինութիւնքը համար գումէին Փոխարքայի տունը, Առվասեան զօրքը շտաբը, զինուորների բնակարանը, Սերախսեան հին ուսումնարանը, զինուորական և քաղաքական նահանգապետաների տները, իսկ այժմ այնպիսի շինութիւնք կան եւրոպական ձեռով՝ որք գերազանցումեն նրանց և որ լսու օրէ աւելանումին, մանաւանդ սերնդական պատուաւոր քաղաքացի Ապրդան Արշակունյացունը, որ առաջինն է Թիգլիզումը, բայց ափսոս այնչափ ծախսին, որ կէս միլիոն նատած կինի . . . .

Տների մէծ մասը կպատկանին Հայոց, և տւած են լաւ վարձով, որքան որ շինութիւնը աւելանումէ, վարձողը չէ պակսում, այնպիսի տներ կան, որ մէկ պահպանը մինչեւ չորս և հինգ տներոր կան, և ոմանք տան վարձով են ապրում։

Բ. Քարւանսարայքն են տանն և եօթն, յորոց 14-ն կը պատկանին Հայոց, իսկ 3 Արացուց։

1. Մէլիքենց, Հայ իշխան Բէհրուդեանցից։  
2. Արծրունու, Հայ զեներալ Արյեօր Արծրունու։  
3. Պարսի, որ առաւ կօմերցի սովէսնիկ Հայ Յովհաննէս Սոնիկանեան Անանեանցից։

4. Խերօդինեանց, Հայ ազնւական։

5. Վորխանակի, Արացի կնեազ Մէլիքեանց։

6. Շիոյենց, Հայ ազնւական։

Այս վեց քարւանսարայքը միմեանց մօտ են բազաղիսանումը և Սիօնի քուչումը :

7. Շաղիննենց, Հայ քաղաքացի :

8. Զօլսկի, այս ընկերութեամբ է Հայ Բարսեղ Տէր Մովսիսեանցի և Վատինագաւառն աղնիւ Յակոբ Օռոբալովի,

9. Ռիպիննենց, Հայ սերնդական պատւառոր քաղաքացի Սարգսեանց :

10. Փաշի, Առացի աղնիւ Ավեգելելովի :

Այս շորար հին քաղաքի կամուրջի աջուձախ կողմն են :

11. Վարդաննենց, Հայ աստիճանաւոր Սամսոնի Տէր Յարութիւնեան, Կուր գետի ափումը Սաղի վերա :

12. Խալաթովի, Հայ քաղաքացի Վատուածատուրի Խալաթեանց :

13. Շիօյենց, Հայ աղնւական :

Այս երկուքը մէկզմէկու հանգէպն են, առաջնը Կուր գետի վերա, և երկրորդը Դաբախանի վերա,

14. Սարաջովինց, Առացի սերնդական պատւոր քաղաքացի :

15. Թառմաննենց, Հայ իշխանք, սա գեռ չէ աւարտած :

Այս երկուսը վերի փողոցումն են :

16. Թառմամշենց, Հայ սերնդական պատւառոր քաղաքացի Գաբրիէլ Թառմամշեանց, Երևանսկի պլոշշաղումն :

17. Երծրունու, Գոլովինսկի պրօսպէկտումն :

Սրանց մէջ երեւլիքն են իւրեանց շինութիւնով՝ Թառմամշեանցի, Երծրունու երկուքն, Ռիպիննեանցի և Խալաթեանցին

Գ. Կրպակները կլինին երեք հազարից աւելի և հետնուհետք աւելանումէ և ոչ մէկը դարտակ չկայ, և մէծ մասը պատկանումէ Հայոց : Կան այսպիսի կրպակներ՝ որ շինւած են երկու և երեք տակ, որոց մէջ բնակվում են օտարականներ :

Կան նմանապէս և հիւրանոցներ նոր եկած աստիճանաւորների և Ճանապարհորդների բնակւելու համար, ուր ամենայն ինչ պատրաստէ, թէ օթախների կարգուսարիքը, և թէ ուտելիքն ու խմելիքը : Սրանց մէջ երեւլիքն հինգ են.

Աւակադ, Դրեզդենսկի, Սանկտպետերբուրգակի, Խոալիան  
Օալցման կոչվածները :

### Է. ԵՐԱԿԱՆԱԿԱՆԱԾԻԹԻԿԻՆ

1783 թւի գաշնադրութիւնով Վքաց ազնականութեան  
իրաւունքը և արտօնութիւնքը հաւասարւեցան Որուսաց ազ-  
նւականութեան հետ : «Սա բաժանվումէ երկու՝ Անեազ և  
Ազնիւ, հին ժամանակը սրանց արտօնութիւնքը բաժան-  
վումէր երեք կարգ կնեազութիւնը», և երեք կարգ ազնւա-  
կանութիւնը : Այս կարգերը հաստատւած էին թագաւորած  
կան հրամարակներով, իսկ ամեն մէկի արժանաւորութիւնը  
սահմանաւած էր միայն արեա ան գնուզակ, առաջ-  
նակարգ կնեազը սպանելու համար սահմանաւած էր արեան  
գինը 15,360 մանեթ . այսչափ էլ Երքեղիսկոպոսինը, իսկ  
ՈՒթրապօլիսինը 12,228 մանեթ : —Երկրորդ կարգի կնեա-  
զինը երկու անգամ պակաս քան զառաջնակարգինը : Երրորդ  
կարգի կնեազինը երկու անգամ պակաս քան գերկրորդ կարգինը:  
Այսպէս էր և ազնւականների մասին կարգադրութիւնը, պա-  
կասեցնելով միայն արեան գինը, երկրորդ կարգի ազնւական-  
ների հետ չաշխում էին և քաղաքացիք, որք կոչվումէին  
Մօքալաքներ :

Անեազները ունեին և ազնւական ստրուկներ, որք կոչ-  
վումէին թաւատի ազնիւ : Թագաւորը կամենալով ցոյց  
տալ իրա առանձին բարեհաճութեան նշանը կնեազներին,  
տալիս էր նրանց ժառանգական սիրապետութեան ազատ ազ-  
նւականներ, բայց հիմայ անկախ են և իրանց իրաւունքը վա-  
յելումեն հաւասար միւս ազատ ազնւականների :

### Ը. ՔԵՊԵՐԵՑԻՔ (Մօքալաք) :

Մօքալաքները, Վքաց թագաւորութեան ժառանգին էին  
ինչպէս պատաւոր քաղաքացիք : Ալիսթանկ թագաւորի օ-  
րէնքից երեսումէ, որ առաջնակարգ քաղաքացին, արիւնի

գինը տոանալու համար հաւասարվում էր երկրորդ կարգի առականի հետ։ Շատերը ցանկանում էին գրւիլ Մօքալաք, որովհետեւ այդ կոչումի հետ ստանում էին իրաւունք զանազան պաշտօնների։ Քաղաքացիք բաժանվում էին մի քանի կարգ (փարողա), և այս կարգը հարկ տալու վերա էր, բայց առաջնութիւնը չկար ժառանգական, առաջնակարգ քաղաքացին արձակ համարձակ կարող էր մոնել երկրորդ և երրորդ կարգում, և անդրադարձարար։ Առվկասեան Փոխարքայի միջնորդութեամբ և Առվկասեան Առմիտետի սահմանադրութեամբ ԹԵԳԵՒՈՐ ԿԵՅՍԻՆ բարեհաճեցաւ հաստատել 7-ն Յունիսի 1859 ամի առաջնակարգ մօքալաքների 79 տունը շնորհելով իրաւունք տոհմական պատւաւոր քաղաքացոյ (տես Մեղրու Հայուստանի 1862 № 6)։ “Երանք ունէին Աքաց թագաւորների մօտ մեծ յարգ ու պատիւ, որովհետեւ Աքացիք չունէին սէր բնակւելու քաղաքումը։ ըստ որում նոցազիստոր գործն էր այգեգործութիւն և երկրագործութիւն։ Ախմիթանգ Գօրգասալան թագաւորն վաճառականութիւն հիմնելու համար հրաւիրեց Հայոցը ով որ ցանկանայ, զայ բնակւի նորաշնչն Խիֆլեկ քաղաքումը, սիրաշտհելով նրանց ամենայն կերպով, և կոչվեցան մօքալաքներ—քաղաքացիք։ Յետոյ վերաբնակւեցան Անի քաղաքից, և աւելի լցւեցաւ Թամար թագուհու ժամանակ։ Իսկ Առևսաց հզօր տէրութեան ժամանակ օր ըստ օրէ բազմանում է Հայոց թիւր։ Քաղաքացիք հին ժամանակը ունէին իրաւունք Ճորտեր ունենալու, քրէական յանցանքի համար չեին պատժվում ծեծով, ինչպէս ռամիկը, այլ փողի տուղանքով։ Նրբ որ Շահի համար Աքացանից հարկ էին ուղարկում տղայք և աղջկերք, որ կոչվում էր արբար, քաղաքացիք ազատվում էին այս անարդ հարկից փող տալով։

### Թ. Ա. Ա. Ե. Շ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Աքաճառականութիւնը իսկդքանէ մինչեւ այսօր Հայոց ձեռքին է հնոյնակն և հարստութիւնը, բայց առաջ

մինչև 1795 թիւր, այսինքն է Թօփլիկի քանդակից վաճառականութիւնը շատ ցաւալի դրութեան մէջ էր, նորքա առուտուր էին անում շատ նահանգներումը՝ Երևան, Շամախի, Կյուսի, Գանջա, Սալբան, Խմերէթ, և բերումենին բամբակ, թել, ապրէշումնեղէն, Լէզզու շտլ, երկաթ, շեր, ձուկն, պղինձ, մեղք, մոմ: Պարսից աղ, սարի բնակիչներից եամինջի: Զերքէպները և Մողլոկու Հայքը բերումէին ձիու ջոկ: Ամստերդամից՝ մահուղ, շաքար: Աննէսիկից՝ ապրէշումի ճոթ: Տաճկաստանից՝ երկաթեղէն, կիսապրէշումե և բամբակէ ճոթ: Պարսկաստանից՝ Հնդկաստանից ապրէշումնեղէն, զար ու զարբար, չթեղէն, խաղակ, խալիք, քէչէք, զանազան ներկեր և այլն: Հաշտորիսանից՝ մազեղէն: Եւրոպացոց հետ առուտուրը ձեռաց էր (նադդ) և ծախում էին զրացի ժողովրդի վերա: Խնչպէս տսումնեն 300,000 մանէթից աւելի չէր լինիլ: Եւրոպայի հետ վաճառականութիւնը շատ ուշ էր, որովհետեւ միշտ նեղութեան մէջ լինելով՝ Պարսից և Օսմանցոց ևս առաւել Դաղստանցոց քարուքանդանելուց, համարես թէ թշնամիքն էին կողովատում ունելիքը, և գումարը նշանաւոր չէր, որ Եւրոպայի հետ առուտուր էին բացել: Որուսաստանի հետ վաճառականութիւնը լինում էր Մողլոկի, Ղզլարի և Հաշտարիսանի ճանապարհով, և շատ վաճառականներ իրանց սեպհականութիւնը ապահով պահպահու համար բնակւեցան այդ քաղաքներումը, որոց ազգականները այժմ կան Թօփլիկում մի և նոյն ազգանունով:

Մինչև 1800 թիւր Որուսաստանի հետ վաճառականութիւնը սակաւ էր, թէպէս 1770 թւից սկսւեցաւ, բայց երբ Վրաստանումը հիմնելով (Որուսաց կառավարութիւնը՝ վերացաւ ճանապարհի ահը, սկսեցին գնալ Վակարիա, և 1807 թւին Մոսկա, իսկ 1811 թւին աւելի շատացաւ, 1817 թւից մինչև 1822 թիւր վաճառականութիւնը Մոսկայի հետ էր երեելի, և Թօփլիկու վաճառականների համար շա-

Հաւետ, նրանք ապրանք էին ուղարկում Պարսկաստան և մեծ օգուտ էին ստանում:

Ոտուաց Տէրութիւնը՝ որի առաջին հոգան է իւր հպատակների երջանկութեան և հարստութեան համար, տես ներկվ թէ Թօփլեզու վաճառականութիւնը չունի երևելի գումար, որ կարողանայ աւելի ընդարձակութիւն ստանալ, վամն որոյ յաւիտենական օրհնութեան յիշատակութեան արժանի Կայսրն Աղէքսանդր Ա. համաձայն առաջարկութեան Դեներալ Երմոլովին ողորմածաբար բարեհաճեցաւ տալ Աքրաստանի վաճառականներին 10 տարի ժամանակով հետեւեալ իրաւունքները. 1) առհասարակ առուտուր անողները ունենան իրաւունք առաջին կարգի վաճառականի առանց որ և իցէ հարկի, 2) ապատ մնան անձնական ծառայութիւնից և հարկից, իսկ նոցա տները նոյնպէս աղատ հարկից (հալորդ) և զինուորական բնակութիւնից. 3) իրաւունք ունենան անշարժ կայք գնել և ծախել. 4) կառավարութիւնը տայ ցանկացողին գետին շահաբեր շինութեան համար. 5) օտար երկիրներից բոլոր բերուծ ապրանքներին տալ հարիւրին հինգ բաժ, ինչպէս որ իրանք գնահատեն. 6) ապրանքի քարվանները պահպանվում էին հեծելազօրքից:

Այս ողորմութիւնով հոկտեմբերի 8-ից 1 21 թից մինչև Յուլիս ամիսը 1832 թիւը մեծ օգուտ տեսան Թօփլեզու վաճառականները, և սկսեցին գնալ ոչ միայն Ոտուաստան, այլ և Էջյացիդ, Թօրեստ, Մարսելիս և ուրիշ քաղաքներ, որոց ապրանքը ծախումէին Թօփլիզում և Պարսկաստանում, և մեծ հարստութիւն ժողովեցին, շինեցին հոյակապ աներ, քարւանաար յէք, կրպակներ, այգիք, աների և կրպակների վարձը աւելացաւ և հետնուհետը բարձրանումէ, շինութեան գետինը թանգացաւ:

Մեծ օգուտ աւատ Թօփլիզու առուտուրին պատերազմները Պարսից և Օսմանցոց հետ, նաև շարունակ 1800-ից Առվկտսաքնակ ազգերի հետ, մեծ օգուտ տեսան դաբաղնե-

ըլը, սարաջները, զօնդաղատղները, ձոները, խանջալսաղները, խարազները և գերձիկները։ Ըստ վաճառականներ սկսեցին փողբաթներ վերառնուլ, և մեծ օգուտ տեսան, որի մէջ զըսն վումեն և այժմ, չկայ այնպիսի փողբաթ որ կամ բոլորովն չայց ձեռքին չլինի, կամ օտարի հետ ընկեր չլինին։ Թիֆլիսու այժմեան վաճառականութիւնը շատ տարածւ ած է Կավկասու կողմը, չկայ քաղաք, ուր Թիֆլիսեցի վաճառական չլինի, բաց ի Եռշի, որ յետ ընկած և վաճառականութեան անյարմաք տեղ է, և նրանք էլ Թիֆլիսուն են վաճառականութիւն անում։ Այժմեան վաճառականութիւնը թէպէտ մեծ մասամբ չայց ձեռքին է, բայց կան և Եւրոպացի գաղթականներ, թէ աղամարդկան և թէ կանայք, որք նոյնպէս պարապումեն այդ գործով, և աւելի թանկ են ծախում քան զմերերը։

Մնացորդը միւս տեսրում։

### Պ Ս Տ Ս Ո Խ Ա Յ :

Եյս օրերումն կարդացինք „Հայկական Աշխարհ“ օրագրի № 1 և 2, որի մէջ Պ. Ստեփանէն համարումէ մեր „Գարուն“ ամսագրի լեզուն անկանոն և անկապ ոճ։ բայց ոչ ինչ հաստատութիւն չէ առաջ բերում, թէպէտ մենք կամենումէինք նորա լեզուի անկանոնութիւնը, ոճի անկապութիւնը ապացուցութիւններով գրել, սակայն երիու բան արգելք եղան։ 1) որ այդպիսի բաներով թերթերի երեսը չըլքնել, որովհեան հայերէն լեզու զիտացողներն կարող են գատել մեր և նորա օրագրի լեզուն։ և 2) անցեալ տարւայ „Առունելիի“ մէջ № 10, 11 և 12, եր. 396 թարգմանում է Ժիւլ Ժանէնի յօդւածը վերաբերեալ օրագրովի բնաւորութեանը և նշանակութեանը։ „Ժիւլ Ժանէն ասումէ, Ամեն երիտասարդ խմբագրողը ամենից առաջ չար է, սա մի նորահաս բուլտօղն (շուն) է, որ կամենումէ ամենի վերա փոր-

ձել, սուր են թէ չէ նորա ատամները, սա մի երեխա է, որին տվել են վէնքը խաղալու, և որը երեակայումէ իւրան մեծ զինոր։ Երիտասարդ կամ նոր խմբաշրողը կարծումէ, որ նա իւր ձեռին բռնած ունի ժամանակակիցների փառքը և պահարակումն, և միշտ յափշտակվումէ իւր առաջին տաքութեամբ, նա առաջին դուշակաբար է գովում և դատապարտում, չհասկանալով դեռ ևս թէ մինչև որ սահմաններ պիտի գնան զովիստը և դատապարտումն։ Խոկ „Այկական Աշխարհի“ այս տարւայ № 1 և 2-ի մէջ նկազագրում է իւրան այսպէս՝ „Եյլ բան է, եթէ մենք ուսումնասիրում ենք և սկսումենք ծանօթանալ ստորին ժողովողի հետ; այդ պէտք է, այդ հարկաւոր է, և պարտական ենք մենք այդ անել, եթէ կամենումենք նորա հետ մի ազդ կազմել. ոչ թէ միայն ստորին ժողովուրդը դժվար կհասկանայ մեզ; բայց և մենք հեշտ չենք հասկանայ միմեանց զրվածը առանց մոտածելու կարգացածի վերա, որովհետեւ մենք սովորել ենք մինչեւ այն դուրս թողնել մեր բերանից ամեն բան անկարդ և անկանոն կերպով, և աչա այսօր մենք ցանկանումենք կարգաւորել և կանոնաւորել այդ բոլորը, որքան հնարաւոր է մեզ, իսկ անհնարաւորը ուսանել ուրիշեց մեզանից առաւել հմուտից“։ Եյս երկու յօդւածները շարժեցին մեզ, որ այսուհետեւ ոչ ինչ պատասխան չտալ երիտասարդ խմբագրողներու հեղնական գրւածքներին։

Հրատակիք։

---

Հրատարակիք Ստեփանոս աւագ քահանայ Մանդինեանց։

---

Дозволено цензурою. Тифлисъ 15-го Июня 1866. г.

՚ի Տպորանի Գլխաւոր Կառավարութեան  
Փոխարքային Կովկասու։